

ԼՍԱՐԱՐ

36(323)
20.12.2012թ.
Հրատարակվում է
1999թ. սեպտեմբերից

Лусарар

ԳԻՏԱԿՐԹԱԿԱՆ ԹԵՐԹ

Lusarar

ՄԱՅՐ ԿՐԹՕՋԱՆԻ ԶԱՐԹՈՆԵՔԻ 20-ԱՄՅԱ ԱՌԴԻՆ ՏՈՆ ՎԵՐԱԴԱՐՉԻ

Դեկտեմբերի 15-ին Շուշիի Խ. Աբովյանի անվան դպրոցում տոն էր մանկավարժական և աշակերտական կոլեկտիվները միասին հարազատ կրթարանի մայր կրթօջախ վերադառնալու 20-ամյակը: Բազմաթիվ գեղեցիկ ավանդույթներ ունեցող ունեցող այս դպրոցը սկզբնավորեց ևս մեկ ավանդույթ՝ վերադարձի տոնը:

1988-ի սեպտեմբերի 18-ով Շուշիում կտրվեց հայկական կյանքի վերջին թելը. հայեցի միակ Խ. Աբովյանի անվան միջնակարգ դպրոցը Շուշիում բնակվող հայ ընտանիքների հետ ստիպված էր լքել իր դարավոր ոտանավոր՝ վերադառնալու բաղձալի ակնկալիքով: Դպրոցն իր ողջ կազմով տեղակայվեց Ստեփանավերտի հ. 5 դպրոցի շենքում՝ պահպանելով կարգավիճակը: Քսան տարի առաջ հայ ռազմիկն իր բազկի ու զենքի զորությամբ իրականացրեց ազգի երազանքը՝ կրկին իր օրինական տիրոջը հանձնեց Շուշին: Ազատագրված քաղաքը զավակներին լիաբուն իր մոտ կանչեց սկսված նոր ուսումնականից մեկ ամիս անց՝ հոկտեմբերին, Խ. Աբովյանի անվան դպրոցի զանգով:



Մայր կրթօջախ վերադառնալու 20-ամյակի տոնակատարությանը մասնակցում էին ԼՂՀ կրթության և գիտության նախարարի տնօրենի և երիտասարդության հարցերի նախարարները, շրջանի ու քաղաքի ղեկավարությունը, ուսուցիչներ, աշակերտներ, հյուրեր:

Օրհնանքի խոսք ասաց տեր Անդրեասը:

Դպրոցի տնօրեն, ԼՂՀ մասնակավոր մանկավարժ Նազիկ Նալբանդյանի խոստովանությամբ, երբ թշնամին հայրը Շուշին դարձրել էր վախճանային կրակակետ մերձակա հայկական բնակավայրերի համար, իրենց մարգարեաբար ասեին, որ մեր շարժման և մայր կրթօջախ վերադառնալու տարեդարձները տոնելու են Շուշիում, չէին հավատալ, կհամարեին երազ: Բայց այսօր այն իրականություն է դարձել:

ԼՂՀ 49 նախարար Սլավա Ասրյանը, շնորհավորելով հիշարժան իրադարձության առթիվ, միաժամանակ վերջին քսան տարի առաջ այս կրթօջախի, հատկապես նրա տնօրեն, մեծ մանկավարժ, երջանկահիշատակ Արսեն Խաչատրյանի ապրումները դպրոցի ապագայի հանդեպ: Կապված պատերազմական իրավիճակի և ֆինանսական դժվարությունների հետ՝ դպրոցի հետագա կարգավիճակի պահպանումը վտանգի տակ էր: Բայց խոհեմ ու սթափ կազմակերպիչների շնորհիվ այն իր ինքնուրույնությունը մաքառումների գնով ոչ միայն պահպանեց, այլև դարձավ Շուշիի վերնաշրջանի մանկավարժների՝ Նախարարը վստահություն հայտնեց քաղաքի կրթամշակութային զարգացման գործում դպրոցի ունեցած դերակատարության հարցում, քանի որ լավագույն ավանդույթներ ունեցող այս կրթօջախն ունի մանկավարժական փորձված և կուռ կոլեկտիվ, որը կարողանում է պատշաճ իրականացնել մատաղ սերունդի կրթության ու դաստիարակության գործը: Ս. Ասրյանը նախարարության պատվոգրով պարգևատրեց կրթօջախի մի խումբ մանկավարժների՝ մշակակալից իրադարձության և այդ տարիների ընթացքում ձեռքբերումների ու նվիրական աշխատանքի համար:

Տոնի կապակցությամբ շնորհավորանքի խոսք ասաց ԼՂՀ մշակույթի և երիտասարդության հարցերի նախարար Նարինե Աղաբալյանը՝ կարևորելով մտավորականության, մասնավորապես մանկավարժների դերը Շուշիի հոգևոր-մշակութային վերածնունդի գործում:

Շուշիի շրջվարչակազմի ղեկավար Վլադիկ Կասյանը նույնպես հիշողություններ ուներ այն օրերի հետ կապված: քաղաքը թեպետ փլատակների մեջ, բայց ամեն օր հնչել է դպրոցական զանգը՝ ուրախություն պատճառելով ամբողջ հայությանը: Նա շրջվարչակազմի պատվոգրով պարգևատրեց դպրոցի մի խումբ մանկավարժների և դպրոցի հիմնադրողներին:

Միջոցառմանը կրթօջախի հրավերով մասնակցում էր Երևանի «Մխիթար Սեբաստացի» կրթահամալիրի պատվիրակությունը՝ տնօրեն Աշոտ Բելեյանի գլխավորությամբ: Այս երկու կրթօջախները համագործակցության ծրագիր ունեն: Ա. Բելեյանն առաջարկեց հարաբերությունները դարձնել առօրեական, ընկերային: Նա հուշանվեր ու գրքեր նվիրեց դպրոցին:

Տոնի կապակցությամբ շնորհավորանքի հեռագրեր էին ուղարկել Երևանի Լեոյի անվան հ. 65 դպրոցի և Խ. Աբովյանի տուն-թանգարանի տնօրենությունները:

Բոլորի մաղթանքը նույնն էր՝ աճի ու զարգացման Շուշին, և Խ. Աբովյանի անվան դպրոցը այդպիսի բազում հոբելաններ տոնի:

ՊԱՏՄԱԿԱՆ ԱՆՅԱԼԻՑ

Թերթելով դիմակայության տարիների ժամանակագրական ակնարկներից մեկը՝ առանձնացնում և ընդգծում ենք այն տողերը, որոնք կարևոր վկայություն են հարուստ ավանդներ ունեցող մի կրթօջախի համար. «Շուշիի Խ. Աբովյանի անվան միջնակարգ դպրոցը տոկոսն է անհա-հաճ բնագիծ ունի: Չընդհատվելով իր տարեգրության որևէ կետում՝ այն իր ինքնադիմակարգ կերտեց: Փաստ է, որ Աբովյանի հզոր թափից առաջ Շուշին օղակվել էր անկոչ տերերի անկուշտ ոհմակով, որոնք խեղում էին հայաշեն Շուշին: Ժամանակին խիստ նվազել էր հայաշատ դպրոցների քանակը, սակայն այս մեկն իր ակունքները խորն էր ակունքել: Ստեղծված լինելով գիշերօթիկ դպրոցի հիմքի վրա՝ ավելի դիմացկուն դուրս եկավ՝ չնայած թշնամին 88-ին հաշվեհարդար տեսավ՝ արմատա-

հան անելով այս պատմական բերդը հիմնող հայերին... Այնուհանդերձ գիտեր, որ պիտի դիմանա, որպեսզի նորից հետ դառնա և իր ապագան վերընձյուղի իր արմատներից... Տնօրեն Մայիսի 9-ը բոլոր շուշեցիների և ողջ հայության արշավուսատենչ կարողութունը փարատեց: Բեկումնային այս հաղթանակը վերածնունդի օրացույց դարձավ...»:

ԱԶՍԱԳՐԱԾ ՀՈՂԻ ԲԵՐԿՐԱՆՔԻ ԾԻՉԸ

Մենք 92-ի մայիսին եկանք Ազատության բարձունք, որտեղից բացվում էր շրջափակման ելքը: Այստեղ շատ շինություններ դեռ միտում էին, բայց օդի մեջ թևածուռ էր հաղթանակի ոգին: Շուշի՛ն էր ազատագրվել... Մարդիկ գալիս էին այստեղ խարխուս գցելու, Ղազանչեցոցին ապավինելու, որի մուտքում ճարձատում էին կիտված հավիկ մոմերը: Քամին սու-

րում էր ամենուր, և կրակե լեզվակները թեժացած գրուցում էին Մեծ իրադարձության մասին: Այստեղ-այնտեղ զինվորական խմբեր են անցուդարձում, որոնց մոտենում էին մարդիկ, հարցնում, համոզվում: Տաճարը վտարանդու տեք ուներ և բողոքում էր կալանավածի պես. «Ազատե՛ք ինձ շուտափույթ: Ես մարդկանց սրտերը ցերմացնելու համար վերստին պիտի հառնեմ: Թշնամու զինապահեստի այս լուծը թոթափեք իմ խորանից; Մոմերը այստեղ պիտի պատսպարեն ու եկողներին աչքալուսամբ տան»:

Շուշին՝ հայի ոստանը, խիզախների կամքով ազատագրվեց և կանչում է անվեհերներին, որ շենացեն այս ժայռակուռ ամրոցը:

Եվ ամենուր լսելի էին բերկրանքի ճիչեր՝ բխած մարդկանց հոգուց՝ զինվորների ու բնիկների, եկվորների և այս հողում հաստատակամորեն արմատ գոցողների՝ բոլորի...

ՎԵՐՆՁՅՈՒՂՎՈՂ ՇԻՎԵՐ

Եկան հայերը բոլոր կողմերից, և քաղաքը ձեռք բերեց դիմագիծ: Լցվում էր այն տարողությունը, որ տարիներ հետո պիտի դառնար սերուցք: Մեկը մյուսին սատարելու բարյացակամությունը խանդավառության շիթ էր արծակում: Լավատեսությունը հաղթահարում էր դժվարությունները: Եռուզեռը տեղակայում էր մարդկային հոսքերը, հստակեցվում էին անելիքները, լուծվում անհրաժեշտ խնդիրները՝ չնայած դեռ թշնամու կրակակետերից վտանգվում էր քաղաքի ամրորը: Եվ քաղաքը դիմակայում էր ու վերընձյուղվում:

88-ին բռնադրաբար հայաթափված հայոց ոստանը 92-ին վերընձյուղվելու շիվեր էր գցում ու զորանում: Մայիսյան հաղթանակը նահատակաց սխրանքը պահելու համար հայությանը բերել էր այս ավետան քաղաքը, որպեսզի փառքով պսակվի հայության ուխտը. հայոց ոստանը պիտի շենամա...

ԱՌԱՋԻՆ ԴՈՂԱՋՆԵՐԸ՝ ԱՎԵՏՄԱՆ ԼՈՒՐ

92-ի հաղթական մայիսին հաջորդած ամիսներին մարդիկ տունուտեղ էին դնում, իսկ աշունը եկավ ավետման դողանքով: Վաղուց չէր լսվել ուսումնականի կարկաչը... Եվ այդ աշունը Ղազանչեցոցի հովանու ներքո գտնվող մայր կրթօջախը թեպետ մեկ ամիս ուշագնացով՝ հոկտեմբերին, իր դռները բացեց վերակերտվող քաղաքի սաների համար: Դեռ այս կրթօջախով էլ դրվեց ազատագրված Շուշիի առաջին հիմնաքարը: Կրթօջախ, որ շուրջ 60 տարվա պատմություն ունի (հիմնադրվել է 1956թ.) և իր գործունեությունը չի դադարեցրել անգամ բռնատեղահանումից հետո և որպես առանձին միավոր՝ գործել է մայրաքաղաքի հ. 5 դպրոցում, հոգաժու անձանց շնորհիվ (Շ. Չայրիյան, Ն. Նալբանդյան) և հաղթանակի տարում իր ուսուցչական ու աշակերտական կոլեկտիվներով եկել է մեկնարկելու նոր մտահղացումների ու ծրագրերի լուսավոր ուղին:

Շարունակելով իր բազմամյա ավանդները՝ դպրոցն իր դղանքները հնչեցրեց ավետման խիճուկով: Նախապես փոքր աշակերտական կազմը (41 աշակերտ) աստիճանաբար համալրվում էր ու սովորանում՝ հետագա տարիներին հասնելով ընդհուպ 500-ի և ուներ հայերեն ու ռուսերեն բաժիններ, քանի որ այստեղ իրենց հանգրվանն էին գտել Բաքվից, Սուրբաբից, Կիրովաբադից, Մինգեչաուրից, Շահումյանից բռնագաղթածները:

Հաջորդ ուսումնականին դպրոցը պատրաստ էր ըստ պատշաճի: Այդ ուսումնականում համալրվել էր և ուսուցչական կազմը՝ դառնալով շրջանի ամենամեծ կոլեկտիվը: Դպրոցի տնօրեն Շահեն Չայրիյանն ամեն ինչ անում էր՝ կարգավորելու բոլոր հարցերը՝ փայտե վառարանների տեղադրում, լուսամուտների, ճեղքերի ամրացում (իրետակոծություններից ու կրակոցներից ոչ մի ապակյա լու-

սամուտ չէր մնացել): Եվ անհրաժեշտ էր ուսումնական ու տնտեսական բոլոր հարցերը լուծել...

Ուսուցիչներն ամեն կերպ խանդավառում էին աշակերտներին ու նոր շուշիաբնակներին, որոնցից շատերը տունուտեղ էին կորցրել, անվերադարձ կորցրել իրենց զավակներին...

Եվ առհասարակ բոլորն աշխատում էին միմյանց հուսադրել ու քաջալերել...

Քիչ էին դասագրքերը, գրեմական պիտույքները, աղքատիկ էր գրադարանի ֆոնդը, բայց մեծ էր հույսը, անչափ մեծ: Ու դպրոցը կայանում էր իր ամեն ինչով՝ ուսումնական, դաստիարակչական աշխատանքների իրագործումով: Ավագ թե սկսնակ մասնագետները դարձել էին մի բռուցք:

Եվ տարիների հեռվից հետագարծ հայացք ձգելով՝ զարմանում ես, թե ինչպիսի հաստատակամությամբ հաղթահարվեցին այդքան դժվարությունները:

ՆՎԻՐՈՒՄ, ՆՎԻՐՈՒՄ

94-ին դպրոցի տնօրենը Նազիկ Նալբանդյանն էր, որի շնորհիվ դպրոցը դառնում էր կուռ կոլեկտիվ՝ իր նպատակներով, անելիքների հստակ գիտակցումով, հասարակական-քաղաքական ակտիվ կենսադիքով:

Դպրոցում աշխատում էին փորձառու շատ մասնագետներ, որոնցից ոմանք, ավագ, այսօր չկան՝ աշխարհագրության ուսուցիչ Գեորգի Պողոսյանը, հայոց լեզվի և ֆիզիկալուսուսուցիչ Ծամադր Սարգսյանը, ռուսերենի ուսուցչուհի Աննետա Լազարևան, հայոց լեզվի ուսուցչուհի Ժուլետա Սարգսյանը, պատմության ուսուցիչ Եղիշե Գաբրիելյանը, իսկ տնօրեն Շահեն Չայրիյանի այցը դպրոցի գործունեության 50-ամյակին վերջինն էր... Նրանց բացակայությունը թախծի մրմունջ է առաջացնում մեր հոգիներում ու քաղցր հիշողություններ: Կարոտով ենք հիշում և մեր թոշակառու ուսուցիչներին՝ Ռիմա Ամիրջանյանին, Զարգարիկ Մկրտչյանին, Պայծառ Գաբրիելյանին, Սիլվա Ալեքսանյանին, Ֆլորա Միքայելյանին, Կրասադիկա Արզումանյանին...

Շատ բան ենք ուսանել մեր ավագներից, որոնց մեջ առանձնանում են բարի խորհրդատուները, փորձառուները: Այդպիսիք են Ռիմա Ամիրջանյանը, Բենիամին Սարգսյանը, Էլլադա Սարգսյանը: Մեծ նվիրվածությամբ է աշխատել մեր դպրոցի 2001-2008թթ. տնօրեն Գեորգի Միքայելյանը, որի օրոք նշվել է դպրոցի գործունեության 50-ամյակը:

Անցել է 20 տարի: 20 տարի շարունակ բացել ենք մեր սիրելի կրթօջախի դուռը, և բարի լույսի մաղթանքը մեր հոգում շարունակ արթնացրել է քաղցր հուշեր: Տարեցները դարձել են ավագ: Երիտասարդներն ակնածանքով են խոսում նրանց մասին, դասեր քաղում նրանց փորձառությունից, ովքեր կրթել ու կրթում են առայսօր:

ԲԱՑ ԴԱՍ

ՍԻՐԵՑԵՔ ՂԱՅՈՑ ԼԵՂՈՒՆ, ԵՎ ՆԱ ԶԻ ԿՈՐԶԻ

Քեզ Մասիսն եմ կոտակում, Որ դու պահես հավիտյան Որպես լեզուն մեր հայոց, Որպես սյունը քո հոր տան:

Կա այսպիսի մի արտահայտություն՝ թատրոնը սկսվում է հանդերձարանից: Իսկ դեկտեմբերի 6-ին Ստեփանակերտի Ե. Չարենցի անվան հ. 7 հիմնական դպրոցի 4-րդ «ե» դասարանում կարգին Եսայանի մայրենիից կազմակերպած համաքաղաքային բաց դասը սկսվում էր հենց դպրոցի մուտքից. ոսկերչեցի մայրենիի ոգին թևածուծ էր ոչ միայն դասարանում, այլև ողջ դպրոցում:

Գեղեցիկ կահավորված դասարանում, որը հեղեղված էր նաև մայրենիի մասին ասույթներով, հյուրերին սպասում էր առավել գեղեցիկ մի անակնկալ՝ գեղանի Անգելինայի հեզանազ հայկական պարը, և... ներկաներն ընկան բոլորովին այլ աշխարհ, ուր Մաշտոցն էր ու մեր քաջ նախնիները, Սարյանն էր ու Սուրենյանցը, Շիրազն էր ու եղեմնից մագապուրծ եղած մի ողջ ժողովուրդ, ուր մեր հայրենիքն էր և մեր լեզուն... Այո, աշակերտները հասկացան, որ դասը լեզվի մասին է՝ Գ. Շիրազի «Չայոց լեզուն» բանաստեղծությունը:

Իսկ անակնկալները շարունակվում էին: Ն. Եսայանի ԽԻԿ համակարգով կազմակերպած դասն ապակազմակերպում էր: Իսկ յուրօրինակ գույնակցում էր: Խթանումը Ս. Սարյանի «Չայաստան» և Վ. Սուրենյանցի «Ուտահարված սրբություններ» նկարների ընթերցումն էր աշակերտների կողմից:

- Նկարում անփոփոխ է գրեթե այն ամենը, ինչ կատարվել է Չայաստան աշխարհի հետ: Թիկունք թիկունքի տված հայոց հպարտ սարերն են, որոնք խորհրդանշում են հայերի հպարտությունը, գեղատեսիլ բնության պատկերներն են ու բարձրադիր վայրերը: Նկարում նաև Ե. Չարենցի «Նախիրյան աղջիկների հեզանազ պարը» է: Նկարը խոսում վկայում է մեր հայրենիքի տխուր անցյալի ու երջանիկ ապագայի, հպարտ, վստահ ու սահուն հայերենով Սարյանի նկարն է մեկնաբանում Մարիամը:

Իսկ Արիանան շարունակում է. - «Ուտահարված սրբություններ» նկարը ողջ հայության ողբերգական ճակատագրի ամբողջական մարմնավորումն է, բողոք՝ ընդդեմ հայ հնադարյան մշակույթի ոչնչացման: Պոփսեմ են եկեղեցիները, սպանվել են վանականները, ընկած է խաչը, մոմը, ջարդված են խաչքարերը... Իսկ ոճրագործությունը շարունակվում է՝ Արցախ, Զրանա Դիքն ու կացնահարված հայ սպա:

Ուսուցչուհին իմաստի ընկալման փուլը նույնպես կատարեց դասարանի օգնությունը: «Պրիզմա» մեթոդի բանալի բառն ընտրելով «Չայոց լեզուն» բառակապակցությունը: Վերջնաբառն ստացան «հայրենիք» բառը, որոնց կապը երևաց նաև աշակերտների կազմած նախադասություններում:

Այնուհետև մեկնաբանեցին «Գրավիչ մուտքի դռնակը», հասկացան, որ բանաստեղծության միջոցով Շիրազը մեզ է հասցրել Մաշտոցի պատգամը՝ ուղղված սփյուռքահայ

մի պատանու:

- Իսկ սփյուռքը... Սփյուռքը մեր ցավն է, մեր ողբերգությունը, մեր հպարտությունը: Եվ «սփռվել» բայից կազմված այս գոյականը դարձել է տարօրինակ մի տեղանուն, որ քարտեզի վրա ցույց տալ հնարավոր չէ: Ճակատագրի բերումով օտար ափերում այսօր ավելի շատ հայեր են ապրում, քան հայրենիքում: Մոտ հարյուր տարի առաջ ծնունդ առավ հայ գաղթավայրերի ընդհանրական, խորհմաստ ու դիպուկ անվանումը՝ սփյուռք, երբ 1915թ. ցեղասպանությունը տարբեր երկրների հայկական գաղթօջախները համալրեց, աշակերտների տխրամած, խելացի, ուշիմ հայացքների ներքո կարծես զրուցում է երիտասարդ ուսուցչուհին:

Խոսքը դասարանինն էր: Ուղղորդված ընթերցանության միջոցով աշակերտներն ընթերցում և մեկնաբանում էին բանաստեղծության բառատողերը. Մասիսը սպասում է, որ իրեն կազատեն գերությունից: Իսկ մայրենի լեզուն չիմացող մարդը ինչո՞վ է հույսը Մասիսի: Չայոցն է, ով հովազի արմատներն էր արմատն էլ խոսի իր մայրենի լեզվով և դարերին հասցնի բյուր դարերից մեզ հասած հավերժ երիտասարդ հայոց լեզուն, քանզի դարեր շարունակ ինքնապաշտպանության հզոր զենք են եղել մեր լեզուն ու մեր գիրը, քանզի մեր պատմության մեծագույն ու սրբազան գործիչն է եղել Մաշտոցը՝ վեր ամեն դյուցազնից, արքայից ու հերոսից: Եվ մենք պարտավոր ենք անարատ պահել մեր անզուգական մայրենին, խոսել, գրել, մտածել հայերեն՝ մեր մայրերի, հայրերի, նահատակված քաջ զինվորների և անմեղ զոհերի լեզվով:

Փոքրիկների ամենը շուրթերից հնչած այս խոսքերը յուրատեսակ կոչ էին համայն հայությանը՝ վերահարձեք ու ավելի շենացրեք մեր տառապած ու փառասպան հայրենիքը՝ Չայաստանը և Արցախը:

Չայրենիքի, լեզվի մասին ասույթների մի փունջ ներկայացնելուց հետո ասարթեզ եկան համակարգիչները: «Գրել» գործունեությունում աշակերտները ցուցաբերեցին փայլուն հմտություններ՝ թե՛ համակարգիչների, թե՛ խոսքի մասերի շուրջ:

Իսկ հետո... Դետո կատարվեց հրաշք, և դասարանը լցվեց Գ. Շիրազի կենդանի ձայնով: Ունկնդրեցինք «Չայոց լեզուն» բանաստեղծությունը: Ասումըրողը հեղինակն էր՝ համաճարեղ Շիրազը:

Ն. Եսայանը հասկանում է, որ դպրոցի «ամենաբաց-ամենախոյունկալ» օղակը տարրական դպրոցն է, և կրթական բնագավառում տեղի ունեցող նորամտություններն առաջինը ընդունվում են այստեղ: Գրականության մեջ շերտերի համագործակցությունից...

Չամակարգիչների երկրորդ անգամ օգտագործումը զարմացրեց ու հիացրեց դասախոսներին:

«Նկարել» գործունեությունում աշակերտները նկարեցին արև և նրա ճառագայթներին գրեցին հենակետային «մայրենի» բառի վերաբերյալ մոր սովորած բառերը՝ մայրենիի հատկանիշները՝ շենշող, արևահամ,

ճառագող, հավերժ, հին, մոր: Ի լրացումն այս ամենի՝ աշակերտների ասած դարձվածքներն էին, որոնք նույնպես վերաբերում էին լեզվին:

Կշռադատումը կատարվեց Դ. Եսայանի միջոցով: Երեխաները գիտեին, որ լեզուն խոսք է, միտք է, հաղորդակցման միջոց, իմաստության գործիք, իմացան, որ լեզուն մեր փրկությունն է, մեր հայրենիքը, մեր ինքնությունը, մեր պետականությունն է, մեր գոյության հիմքը, մեր կշիռն է աշխարհում, Մասիսի հույսն է և մեզ հայ պահողը, քանզի մեր լեզվի մեջ մարմնացած է հայ ժողովրդի ոգին, նրա ամեն մի բառ մեր ժողովրդի հոգու կանչն է, հոգու մի սուրբ մատուց:

Դասի վերաբերյալ հիացումը դարձավ լիարժեք, երբ հնչեց Խ. Աբովյանի ուղերձը հայ երիտասարդներին. «Այս, լեզուն, լեզուն, լեզուն որ ջըլի, մարդ ընչի՞ ման կըլի: Մեկ ազգի պահողը, իրար հետ միացնողը լեզուն աս ու հավատը: Լեզուն փոխի՞ր, հավատը ուրացի՞ր, էլ ընչո՞վ կարես ասիլ, թե ո՞ր ազգիցն ես:

Չե՞զ մե ասում, ձե՞զ, հայոց նորահաս երիտասարդք, ձեր անունին մեռնի՞մ, ձեր արևին դուրբա՞ն. տասը լեզու սովորեցե՞ք, ձեր լեզուն, ձեր հավատը դայիմ բռնեցե՞ք»:

Ռեհա ՕՅՆՆՅԱՆ
Քաղաքային
մեթոդիկական
նախագահ

ՅՈՒՆԻԿՈՒՆԻՏ, àòêàòòÆâÛ°ðÆ , òðÀ , äðàòàòØ

Այսօրվա դպրոցի և ուսուցչի առջև մեծ ու պատասխանատու առաքելություն է դրված: Բացի հանրակրթություն իրականացնելուց, ուսուցիչը նորություններն ու տեխնոլոգիաների բազմազանության հորձանուտում պարզապես պարտավոր է և՛ համաքայլ ընթանալ, և՛ կարողանալ ճիշտ նպատակաուղղել աշակերտին:

Եվ այն բոլոր կարծիքը, թե այսօրվա երիտասարդ ուսուցիչներն ի վիճակի չեն լիարժեք մանկավարժություն իրականացնել՝ սխալ է:



Դպրոցները համալրվել են երիտասարդ մանկավարժական կադրերով, ինչն ինքնին շատ տեղին ու անհրաժեշտ է: Նրանք ավելի շուտ և հմտորեն են համակերպվում ու ինտեգրվում ուսուցման նոր մեթոդներին ու դասավանդման նոր ձևերին, իրենց կողքին ունենալով ավագ մանկավարժին՝ նրանք դառնում են ինքնավար ու վճռական: Եվ լսելով երիտասարդ ու կարող ուսուցիչների դասերը, համոզվում են, որ երկրի ապագան հուսալի ձեռքերում է:

Ելլադա Խաչատրյանը վեց տարի է՝ աշխատում է Ա. Մախարովի անվան հ. 8 ավագ դպրոցում՝ որպես անգլերենի ուսուցչուհի: Վերջերս ըստ անգլերենի մեթոդիկական հաստատված պլանի՝ նա բաց դաս կազմակերպեց բնագիտական հոսքի 12-րդ դասարանում:

Դասի թեման էր՝ «Չամաշխարհային ճարտարապետության գլուխգործոցները»: Ողջունելով աշակերտներին՝ երիտասարդ ուսուցչուհին աշակերտների հաշվառումից և մատուցումն զրառում կատարելուց հետո նյութն ամփոփեց ֆրոնտալ հարցումով:

Օգտվելով ինտերակտիվ մեթոդներից և ուսուցման նոր տեխնոլոգիաներից՝ նա հմտորեն աշակերտներին ուղղորդում էր ակտիվ գործունեության և դասի թեմատիկայի շուրջ բառային աշխատանքները կատարեց նրանց օգնությամբ: Գրատախտակին գծագրվեց բառերի շրջայական կապը, և աշակերտները սկսեցին աշխատել տեքստային բառերի վրա:

Տեքստը հարցերով ամփոփելուց հետո (հարցերը ճանաչողական, ուսուցողական բնույթ էին կրում) ուսուցչուհին անցավ դասի հարցմանը: Քանի որ նախորդ դասին ուսուցչուհին հանձնարարել էր տվյալ թեմայի շուրջ



լրացուցիչ նյութերով հանդես գալ դասին, ուսուցչուհին հանդես էր գալով «Caso Batlo» - «Ոսկորների տուն» ճարտարապետական կոթողի մասին՝ համակարգչի էկրանի վրա պատկերված նկարի շուրջ: Այն 20-րդ դարի հրաշակերտ կա-

մությանը ներկայացրեց «Հռոմի Կոլիզեյի» մասին տեսանյութը: Իսկ դասարանը պասիվ դերում չէր, քանի որ հմուտ ուսուցչուհին ֆրոնտալ և հուշող հարցերի միջոցով նրանց ներքաշում էր դասապրոցեսին:



ռույց է Իսպանիայում, և աշակերտուհին գրագետ անգլերենով որպես էքսկուրսավար՝ մանրամասն նկարագրում էր կոթողի պատմությունը ու ճարտարապետական նշանակությունը: Դիմելով դասարանին՝ ուսուցչուհին, հարցրեց, թե ավելի վաղ ժամանակաշրջանի ինչ պատմական կոթողի մասին գիտեն: Ամեն մույն վարժ ու գրագետ անգլերենով, որպես էքսկուրսավար, համակարգչի օգ-

Օրինակ՝ այն հարցին, թե որտեղ են տեսել այդ կոթողը, նրանք պատասխանեցին՝ «Վարդիատոր» ամերիկյան ֆիլմում, իսկ մեկ ուրիշը լրացրեց, որ ֆիլմում հնչում են հայկական դուդուկի մեղեդիները մեծ վարպետ Ջիվան Գասպարյանի կատարմամբ: Այստեղ ուսուցչուհին բացահայտելով իր աշխարհայացքի և իմացականության բազմա-միջամտությամբ պատմեց հայկական լեզունի՝ Ջիվան Գասպարյանի և նրա գործիքի հրաշագործ պատմությունը՝ դուդուկի նվագի ներքո: Ամեն ինչ ապահովված էր դասին՝ տեխնոլոգիական միջոցներ, լրացուցիչ նյութեր, միջառարկայական կապեր: Չրույց ծավալվեց նաև հայկական ճարտարապետական կոթողների, երևանի հատկագծի, Թունամյանի մասին:

Եվ ուսուցչի այն հարցին, թե մեզ մոտ՝ Չայաստանում, Արցախում ինչ համրահայտ ճարտարապետական կոթողներ գիտեն, Կամոն՝ դարձյալ որպես էքսկուրսավար, էկրանի վրա սկսեց պատմել Աղթամարի մասին՝ երբ է կառուցվել, որտեղ է գտնվում, ինչ վերաբերումն է արժանացել Թուրքիայի, ապա ՅՈՒՆԵՍԿՕ-ի կողմից: Իսկ Մարիաննան հայերենով, Յաննան՝ անգլերենով ներկայացրին Գ. Թունամյանի «Ախթամար» պոեմից հատվածներ:

Վերջում ուսուցչուհին գրատախտակի վրա (նախօրոք գծագրված էր) ներկայացրեց խաչքառ՝ նոր և նախորդ թեմաների տեքստերից. նա բառերին վերաբերող նկարը ցուցադրում էր, իսկ աշակերտները լրացնում էին խաչքառը:

Որպես տնային առաջադրանք՝ հանձնարարվեց թեմային համահունչ շարադրություն պատրաստել «Մենք ենք մեր սարերը» վերտառությամբ: Այսինքն՝ թե՛ հին թեման, թե՛ տնային առաջադրանքը ուսուցիչը մատչելի և մանրամասն մատուցեց աշակերտներին, ու այն դարձավ բոլորի սեփականությունը: Տնային առաջադրանքը նաև նոր դասի թեման էր, ուսուցչուհին գրատախտակին գրեց բառեր ու բառակապակցություններ, որոնք պետք է օգտագործեին աշակերտներն իրենց շարադրություններում:

Միայն այսպիսի հազեցած և նպատակալաց ու լիարժեք դաս ներկայացրեց անգլերենի երիտասարդ ուսուցչուհի Ելլադա Խաչատրյանը:

Այո, փոխվել են ժամանակները, փոխվել են մեր աշակերտները, ուրեմն՝ պետք է փոխվեն նաև մենք՝ մանկավարժներս և կրթե՞նք ու դաստիարակենք նոր մեթոդներով ու մոտեցումներով:

Եկե՛ք ողջունենք երիտասարդ մանկավարժներին ու թե՛ր տանք նրանց՝ ճախրելու գիտելիքների ուսուցման բարձունքներում, որպեսզի հաստատ քայլեն դպրոցում և լավ գիտակցեն իրեն ժողովրդի զավակներին ճիշտ կրթելու ռազմավարական նշանակությունը: Ելլադայի մասն երիտասարդ ուսուցիչներ էլի կան մեր դպրոցում, և համոզված են, որ ուրիշ դպրոցներում նույնպես կան, ինչը շատ ողջունելի է:

Ռեդեգա ՂԱՐԱՍԻՆՅԱՆ
Սրբեկ. հ. 8 ավագ դպրոցի
փոխվարժ

ՄԵԹՈԴԱԿԱՆ

ԽԱՌՆՈՒՐԴՆԵՐԻՆ ՎԵՐԱԲԵՐՈՂ ՔԻՄԻԱԿԱՆ ՄԻ ՔԱՆԻ ԽՆԴԻՐՆԵՐԻ ԼՈՒԾՄԱՆ ԵՂԱՆԱԿՆԵՐ

Տարբեր բնույթի քիմիական խնդիրների լուծումը նպաստում է աշակերտների ինքնուրույն ստեղծագործական ընդունակությունների զարգացմանը, առաջացնում հետաքրքրություն առարկայի նկատմամբ, զարգացնում երեխայի տրամաբանական մտածողությունը: Քիմիական խնդիրներ լուծելիս մեծ նշանակություն ունեն միջառարկայական կապերը մաթեմատիկայի և ֆիզիկայի հետ, որոնք թույլ են տալիս որոշ խնդիրներ լուծել առավել ռացիոնալ եղանակով: Քիմիայում շատ հաճախ ենք հանդիպում լուծույթների, խառնուրդների կամ համաձուլվածքների վերաբերյալ խնդիրների, որոնք թե՛ գործնական և թե՛ տեսական կարևոր նշանակություն ունեն: Առանձնապես կարևոր է, երբ միևնույն խնդրի լուծումն ուղեկցվում է տարբեր եղանակներով:

Ներկայացնենք խնդիրների լուծման մի քանի եղանակներ: **Խնդիր 1.** Քանի՞ գրամ 15%-անոց և 45%-անոց աղի լուծույթ է անհրաժեշտ 600գ 40%-անոց լուծույթ պատրաստելու համար:

(Ս. Խաչատրյան. «Քիմիայի խնդրագիրք», խնդիր 4-36)

I եղանակ - Ընդունենք, որ 15%-անոց լուծույթից պետք է վերցնել x գ, իսկ 45%-անոցից՝ y գ: Այդ դեպքում առաջին լուծույթում պարունակվող մաքուր լուծված նյութի զանգվածը կլինի՝ $\frac{15x}{100} = 0,15x$ գ, երկրորդ լուծույթում պարունակվող մաքուր նյութի զանգվածը՝ $\frac{45y}{100} = 0,45y$ գ.:

Պատրաստվող լուծույթում պարունակվող մաքուր նյութի զանգվածը կլինի՝ $\frac{40 \cdot 600}{100} = 240$ գ:

Այս ամենը համառոտ կարելի է գրել. I լուծույթ՝ 15%-անոց x գ, որում լուծված նյութը՝ 0,15 x գ, II լուծույթ՝ 45%-անոց՝ y գ, որում լուծված նյութը՝ 0,45 y գ, III լուծույթ՝ 40%-անոց 600 գ, որում լուծված նյութը՝ 240գ: Հավասարումների համակարգը կլինի՝

$$\begin{cases} x + y = 600 \\ 0,15x + 0,45y = 240 \end{cases} \Leftrightarrow \begin{cases} x = 600 - y \\ 0,15 \cdot (600 - y) + 0,45y = 240 \end{cases} \Leftrightarrow \begin{cases} x = 600 - y \\ 90 - 0,15y + 0,45y = 240 \end{cases} \Leftrightarrow \begin{cases} x = 600 - y \\ 0,3y = 150 \end{cases} \Leftrightarrow \begin{cases} x = 600 - y \\ y = 500 \end{cases} \Leftrightarrow \begin{cases} x = 100 \\ y = 500 \end{cases}$$


Պատ՝ 100գ, 500գ

II եղանակ - Խնդիրը կարելի է լուծել նաև մեկ անհայտով: Եթե 15%-անոց լուծույթի զանգվածը x գ է, այդ դեպքում ըստ խնդրի լուծման պայմանի երկրորդ լուծույթի զանգվածը կլինի՝ (600-x) գ: Լուծույթներում լուծված նյութերի զանգվածների գումարը հավասար կլինի երրորդ լուծույթում լուծված նյութի զանգվածին: Հավասարումը կլինի՝

$$\begin{aligned} 0,15x + 0,45(600-x) &= 240 \\ 0,15x + 270 - 0,45x &= 240 \\ 0,3x &= 30 \\ x &= 100 \end{aligned}$$

600-100=500
Պատ՝ 100գ 15%-անոց լուծույթ
500գ 45%-անոց լուծույթ


III եղանակ - Այս և նմանատիպ խնդիրներ լուծելիս կարելի է օգտվել նաև սխեմատիկ եղանակից (խաչի կանոնից):



Կենտրոնում գրում ենք ստացվող լուծույթի զանգվածային բաժինը՝ տոկոսներով, այսինքն՝ 40%, այնուհետև ձախ մասում՝ մեկը մյուսի տակ գրում ենք խառնվող լուծույթների զանգվածային բաժինները, ընդ որում՝ մեծը ստորին մասում, իսկ փոքրը՝ վերին, այսինքն՝ 45% և 15%: Այնուհետև հաշվում ենք հետևյալ տարբերությունները և գրում աջ մասում՝ 45-40=5, 40-15=25: Եզրակացնում ենք. որպեսզի ստանանք 40%-ոց 600գ լուծույթ, պետք է վերցնել նշված լուծույթներից 5:25 հարաբերությամբ: Եթե մեկ մասը ընդունենք x և նկատի ունենանք, որ պետք է ստանանք 600գ լուծույթ, ապա կարող ենք գրել.

$$\frac{x}{600-x} = \frac{5}{25}, \text{ որտեղից կգտնենք՝ } x=100\text{գ.} \Rightarrow 600-100=500\text{գ}$$

Պատ՝ 100գ, 500գ
Խնդիր 2. Քանի՞ գրամ ջուր և MgCl2-ի 20%-ոց լուծույթ պետք է վերցնել նույն աղի 300գ 4%-ոց լուծույթ պատրաստելու համար:
(Ս. Խաչատրյան, «Քիմիայի շտեմարան», խնդիր 3-5)
Ըստ վերը բացատրածի՝ կազմենք սխեման՝



$$\begin{aligned} \text{Սխեմայից երևում է, որ } \frac{x}{300-x} &= \frac{16}{4} \Rightarrow (300-x) \cdot 4 = x \\ 5x &= 1200 \\ x &= 240\text{գ} \\ y &= 300-240=60\text{գ} \end{aligned}$$

Պատ՝ 240գ ջուր և 60գ 20%-ոց MgCl2 -ի լուծույթ:


Քիմիայում հաճախ են հանդիպում այնպիսի խնդիրներ, որոնց լուծումը պահանջում է երեք անհայտով երեք հավասարում կազմելու հնարավորություն:

Խնդիր 3. Պրոպանի, պրոպինի և պրոպենի 2,48գ խառնուրդն այրելիս առաջացել է 4,03լ ածխածնի (IV) օքսիդ: Քանի՞ գրամ ջուր է ստացվել այդ դեպքում:

(Ս. Խաչատրյան, «Քիմիայի շտեմարան», խնդիր 9-34)

Լուծում
Տրված զազային խառնուրդում պարունակվող զազերի նյութաքանակները համապատասխանաբար նշանակենք՝ $\nu(\text{C}_3\text{H}_8)=x$ մոլ, $\nu(\text{C}_3\text{H}_4)=y$ մոլ և $\nu(\text{C}_3\text{H}_6)=z$ մոլ:

Գրենք դրանց այրման ռեակցիաների հավասարումները և կատարենք հաշվարկներ:



Ըստ խնդրի պայմանի և ռեակցիաների հավասարումների՝ կստանանք $44x+40y+42z=2,48$, $(3x+3y+3z)22,4=4,3$ կամ՝ $3x+3y+3z=0,18$: Ջրի մոլերի թիվը ըստ հավասարումների՝ $(4x+2y+3z)$ մոլ է, որը կարելի է արտահայտել ածխածնի (IV) օքսիդի մոլերի թվով՝ $4x+2y+3z=(3x+3y+3z)+x-y=0,18+x-y$: Կստանանք հետևյալ հավասարումների համակարգը՝

$$\begin{cases} 44x + 40y + 42z = 2,48 \\ 3x + 3y + 3z = 0,18 \\ 4x + 2y + 3z = 0,18 + x - y \end{cases} \Leftrightarrow \begin{cases} 44x + 40y + 42z = 2,48 \\ 42x + 42y + 42z = 2,52 \\ 4x + 2y + 3z = 0,18 + x - y \end{cases} \text{ I-ից հանենք II-ը}$$

$$\Rightarrow 2x - 2y = 2,48 - 2,52 \text{ կամ } 2(x-y) = -0,04 \text{ կամ } (x-y) = -0,02$$

(x-y)-ի արժեքը տեղադրենք երրորդ հավասարման մեջ: Կստանանք, որ ջրի մոլերի թիվը՝ $\nu(\text{H}_2\text{O}) = 0,18 - 0,02 = 0,16$ մոլ $\Rightarrow m(\text{H}_2\text{O}) = 0,16 \cdot 18 = 2,88\text{գ}$

Պատ՝ 2,88գ, H2O
Այս խնդիրը կարելի է լուծել նաև այլ եղանակով: Գազային խառնուրդում պարունակվող ջրածինը և ածխածինը այրումից հետո պետք է որ պարունակվեն համապատասխանաբար, ջրածինը՝ ջրում, իսկ ածխածինը՝ ածխաթթու զազում: Ըստ զանգվածի պահպանման օրենքի՝ ինչքան ածխածին կա խառնուրդում, նույնքան կլինի ածխաթթու զազում և ինչքան ջրածին կա խառնուրդում, նույնքան էլ կլինի ջրում: Եթե ըստ պայմանի առաջացել է 4,03լ CO2, ապա հետևում է, որ $\nu(\text{CO}_2) = 4,03:22,4 = 0,18$ մոլ $\Rightarrow \nu(\text{C}) = 0,18$ մոլ $\Rightarrow m(\text{C}) = 0,18 \cdot 12 = 2,16\text{գ}$: Այստեղից եզրակացնում ենք, որ գազային խառնուրդում պարունակվող ջրածնի զանգվածը կլինի խառնուրդի զանգվածի և ածխածնի զանգվածի տարբերությունը՝ $m(\text{H}) = 2,48 - 2,16 = 0,32\text{գ} \Rightarrow \nu(\text{H}) = 0,32$ մոլ $\Rightarrow \nu(\text{H}_2\text{O}) = 0,16$ մոլ $\Rightarrow m(\text{H}_2\text{O}) = 0,16 \cdot 18 = 2,88\text{գ}$:
Պատ՝ 2,88գ, H2O

Խնդիր 4. Միևնույն անոթի մեջ մի դեպքում լցրել են թթվածին, և կշռել է 100գ, երկրորդ դեպքում՝ ազոտ, և կշռել է 99,54գ, երրորդ դեպքում՝ էթիլ սպիրտ (****=0,8): Քանի՞ գրամ դիվինիլ կստացվի այդ քանակի էթիլ սպիրտից, եթե ռեակցիան ընթանում է 80% ելքով:
(Ս. Խաչատրյան, «Քիմիայի շտեմարան», խնդիր 14-57)

Լուծում
Դիցուք՝ անոթի զանգվածը եղել է x գ, այդ դեպքում, ըստ խնդրի պայմանի, $m(\text{O}_2) = (100-x)$ գ և $m(\text{N}_2) = (99,54-x)$ գ:

$$\text{Համաձայն } \nu = \rho \cdot V_m \text{ կամ } \nu = \frac{m}{M} \cdot 22,4 \text{ բանաձևի՝ } \nu(\text{O}_2) = \frac{100-x}{32} \cdot 22,4 \text{ և } \nu(\text{N}_2) = \frac{99,54-x}{28} \cdot 22,4$$

Եթե զազերը լցրել են միևնույն անոթի մեջ, նշանակում է՝ նրանց ծավալները հավասար են: Այստեղից հետևում է, որ՝

$$\frac{100-x}{32} \cdot 22,4 = \frac{99,54-x}{28} \cdot 22,4 \text{ կամ՝}$$

$$\frac{100-x}{32} = \frac{99,54-x}{28}, \text{ որտեղից՝}$$

$$7 \cdot (100-x) = 8 \cdot (99,54-x)$$

$$700 - 7x = 796,32 - 8x$$


$$x = 96,32\text{գ}$$

x-ի արժեքը (որը անոթի զանգվածն է) տեղադրենք հավասարումներից մեկում, կստանանք անոթի ծավալը:

$$\nu(\text{O}_2) = \frac{100-96,32}{32} \cdot 22,4 = 0,115 \cdot 22,4 = 2,576(1) \Rightarrow \nu(\text{C}_2\text{H}_5\text{OH}) = 2,576(1) = 2576(1)$$

$$m(\text{C}_2\text{H}_5\text{OH}) = 2576 \cdot 0,8 = 2060,8\text{գ}$$

Գրենք էթիլ սպիրտից դիվինիլի ստացման ռեակցիայի հավասարումը՝



Ռեակցիայի հավասարումից կգտնենք, որ z=1209,6գ դիվինիլ, որը համապատասխանում է տեսական ելքին, իսկ 80% ելքի դեպքում այն կլինի՝

$$\frac{1209,6 \cdot 80}{100} = 967,8\text{գ}$$

Պատ՝ 967,8գ դիվինիլ

Սվետլա ԴԱՆԻԵԼՅԱՆ
Մեծ Թաղերի միջև. դպրոցի ՄԿԱԳՏՏ,
քիմիայի ուսուցչուհի

ՈՒՍՈՒՑՈՂԱԿԱՆ

ԼԵՂՎԱԿԱՆ ՍԽԱԼՆԵՐԸ՝ ԶԻՄԱՑՈՒԹՅԱՆ ՎԵՏԵՎԱՆՔ

Դպրոցականների հայոց լեզվի և գրականության թեստային բազմաթիվ առաջադրանքներում պահանջվում է գտնել բառագործածության, բառաձևի համաձայնության, հոլովառության և խնդրառության, շաղկապի կամ դերանվան կիրառության սխալները:

Դիտարկման ուղրտից նայելով բազմաթիվ լեզվական աղավաղումների, որոնք երբեմն նկատելի են լինում թե՛ մանուկում և թե՛ եթերում, ինչու էլ, նաև որոշ մանկավարժների գրավոր կամ բանավոր խոսքում, դրանք քննարկման նյութ են դառնում նաև ուսուցիչների և աշակերտների համար:

Սովորաբար բառագործածության սխալները բառիմաստը չհասկանալու կամ ստույգ չիմանալու հետևանք են: Դա նկատելի է առավելագույնս բառագույգերի գործածության ժամանակ, երբ իմաստային տարբերակման դժվարություն է ստեղծվում:

Մեկ տարվա հաշվետվության մասին սխալ է գործածված. «Համայնքի ղեկավարի զեկույցից հետո հնչեցին տարաբնույթ հարցեր»:

«Զեկույց» բառը բացատրվում է այսպես՝ որևէ հարցի մասին գրավոր կամ բանավոր հակիրճ տեղեկատվություն: Զեկույցը նաև գիտական կամ այլ բնույթի հետազոտությունների արդյունքների համառոտ հաղորդումն է: Զեկույց (այս դեպքում օտար բառով՝ ռապորտ) կարելի է վերադասարկել ներկայացնել որևէ դեպքի, պատահարի, մեկի վարքի կամ իր իսկ հրաժարականի մասին և այլն:

Փաստորեն նախադասության մեջ պետք է գործածվեր «զեկուցում» բառը, որը նշանակում է բանախոսություն՝ բանավոր խոսք, որը կարող է հնչել նաև իբրև գրվածքի ընթերցում:

Մեկ ուրիշ նախադասություն.

«Դպրոցի տնօրինության կողմից գրություն ուղարկվեց»:

Արդի արևելահայերենում տնօրինություն՝ շատ անգամ գործածում են «դիրեկցիա» բառի դիմաց, ինչը, սակայն, պիտի համարել անմասնակա հարմար, քանի որ կա «տնօրենություն» բառը, որը հենց տեսչություն, ղեկավարություն է նշանակում: Տնօրինություն՝ սովորական կիրառություն ունի, նշանակում է տնօրինելու, վերահսկելու իրավունք, իրավասություն:

Սովորաբար հայերենում հոլովվում են գոյականներն ու դերանունները: Մյուս խոսքի մասերը կարող են հոլովվել գոյականաբար գործածվելիս: Այսինքն՝ բառը փոխում է իր ձևը, փոփոխության է ենթարկվում, հենց դրանից է կախված տվյալ բառի պաշտոնը: Բայց համախառն ենք հանդիպում հոլովածի գործածության սխալների:

1. Հրաժեշտի տոն օրվան իր ծնողների հետ հյուր էր եկել... (փոխանակ՝ տոն օրը, ե՞րբ հարցին է պատասխանում, արտահայտում է ժամանակի իմաստ):

2. Նա խնդրեց հուշամեդալը փոխանցել հասցեատերին (փոխանակ՝ հասցեատիրոջը):

Հայերենում ընդամենը մի քանի անձ ցույց տվող գոյականներ ունենք (թույր, տեր, ընկեր...) և դրանցով կազմված բարդ բառեր (հարսնաքույր, հասցեատեր, դասընկեր...), որոնք պատկանում են **-ոջ** արտաքին հոլովման:

Ում ածանց ունեցող գոյականներ ունենք, որոնք կարող են գործածվել որպես բայեր՝ շարժում-շարժել, լուծում-լուծել և այլն: Այդ գոյականներն **ան** հոլովմամբ կարող են հոլովվել՝ շարժման, լուծման...

Ուշադրություն դարձնենք այս նախադասությանը.

«Հերոսի նահատակման 20-րդ տարեկիցն էր»:

«Նահատակվել» բառի բայահիմքը «նահատակ»-ն է, որն ի հոլովմամբ միայն կարող է հոլովվել՝ նահատակի, այնինչ այդ բառը հոլովվել է **ան** հոլովմամբ, որը սխալ է, չէ՞ որ **ու**մ ածանցով, որպես գոյական՝ «նահատակում»

բառի գործածության ձև չունենք:

Մեկ ուրիշ նախադասություն.

«Դրանք վերաբերում են արձակուրդների տրման ու...»:

Ինչպե՞ս կարելի է «տալ» բառը գործածել որպես առարկա՝ գոյական, որը նույնիսկ **ան** հոլովմամբ էլ հոլովվել է, այնինչ անկանոն բայ է, գործածվում է հիմնականում **տվել, տալիս** ձևերով: Որպես անորոշ դերբայ, այսինքն՝ անդեմ բայ՝ գոյականաբար գործածվելիս **ու** հոլովմամբ կարող է հոլովվել՝ տալու, տալուն..., հետևաբար, «տրման» բառի գործածություն չունենք:

Քանի որ խոսքը բայերին է վերաբերում, սխալ է «դառնալ» բայի այսպիսի գործածությունը.

«Նրանք բռնուցք դառան»:

Ունենք բայեր, որոնք խոնարհման սովորական կանոններից շեղվում են: Այդ անկանոնությունը հիմնականում դրսևորվում է (բացի **տալ, լալ, գալ** բայերից) սահմանական եղանակի անցյալ կատարյալի հիմքից կազմված ձևերում և հրամայական եղանակում:

Վերոնշյալ նախադասության մեջ անկանոն բայը անցյալ կատարյալով պետք է գործածվեր՝ դարձան:

Հաճախակի ենք հանդիպում նաև համակատար դերբայի սխալ գործածության ձևերի: Այն արտահայտում է ժամանակի իմաստ:

«Կարողալուց ի՞նչ հասկացաք» հարցական նախադասության մեջ **կարողալիս** անդեմ բայի գործածությունն է ճիշտ: Սովորաբար անշորոշ դերբայները գոյականաբար գործածվելիս բացառական հոլովում կարող են հանդես գալ նաև **հետո** կապի հետ (կարողալուց հետո):

Բազմաթիվ են այդպիսի սխալները.

1. Որսի **զնալուց** ասաց (փոխանակ՝ **զնալիս**):

2. Լավ **մտածելուց** կիսականաս (փոխանակ՝ **մտածելուց հետո**):

Սխալների ենք հանդիպում նաև կապային կառույցներում:

«Ի շնորհիվ համազուղացի» կապակցությունը, ապա «**ի շնորհիվ բարերարի**» ասելուն հավասար պիտի սովորական հնչեր «**բարերարի ի շնորհիվ**» արտահայտությունը, որը սխալ է: Ի տարբերություն նախադիր կապերի, որ գործ է ածվում կապվող բառից առաջ և ետադիրների, որ գործածվում է հետո՝ **շնորհիվ** կապը դրվում է կապվող բառից առաջ և հետո, այն գործածվում է առանց **ի** նախդիրի:

Կապերի հետ սովորաբար գործածվում են բոլոր հոլովները, բացի ուղղականից: Յուրաքանչյուր կապ կարող է հանդես գալ որոշակի հոլովածի հետ, ունենալ, իր հոլովառությունը:

Վերաբերության անուղղակի խնդիրը գործածվում է **մասին** կամ **վերաբերյալ** կապերով, բայց, ցավոք, այն իր տեղը չի գտել այս նախադասության մեջ:

«Նա իր խոսքում նշեց նաև երեխաների կարողությունները (փոխանակ լինի՝ **կարողությունների մասին**):»

Կամ ի՞նչ կարիք կա նպատակի իմաստ արտահայտող **համար** կապը գործածել երկու անգամ նույն նախադասության մեջ.

«Գյուղացիներն ստիպված են տաքսի պատվիրել գնումների համար, շրջկենտրոն մեկնելու համար»:

Բազմիցս հանդիպում ենք նմանատիպ կցկտուր նախադասությունների՝ իմաստային և ոճական սխալ նրբերանգներով, բառերի անհարկի կրկնություններով:

1. Այնտեղ գետնոված վերնագրերը գուտ վերնագրեր չեն, այլ հերոսին ընդգծող վերնագրեր:

2. Նրանք իրենց վաստակը վաստակել են:

3. Շրջանում կան 70 հա նռան բերքատու այգիներ, կան նաև նռան երիտասարդ այգիներ, և նախատեսվում է աշնանն ու գարնանը նոր այգիներ ստեղծել:

Նկատելի են նաև բազմաթիվ խնդրառու-

թյան սխալներ:

1. Նա դավաճանեց **հայրենիքը** (փոխանակ՝ **հայրենիքին**):

2. Պետք է խթանել գրավոր և բանավոր խոսքի **զարգացմանը** (փոխանակ՝ **զարգացումը**):

Ընդհանրապես, **դավաճանել** բայը պահանջում է **ո՞ւմ, ի՞նչի՞նչ** հարցերին պատասխանող խնդիր լրացումներ՝ դավաճանել գործին, ընկերներին, սիրուն և այլն: Դրան հակառակ՝ **խթանել** բայի լրացումը պատասխանում է ոչ թե ի՞նչի՞նչ, այլ՝ ի՞նչ հարցին:

Խթանել նմույզը, գործը, զարգացումը..., բայց սովորաբար նախադասություններում գործածվում է այդ բայը սխալ խնդրառությամբ:

Հանդիպում ենք նաև թվային անհամաձայնության դեպքերի:

Ովքեր չեն մոռանում, որ եզակի ենթակայի հետ դրվում է եզակի, իսկ հոգնակիի հետ՝ հոգնակի ստորոգյալ, նրանք, անշուշտ, հեշտ կնկատեն եղած անհամաձայնությունը, որը տարածվում է նաև լրացումների վրա:

1. Այս տարվա առարկայական օլիմպիադայի շրջանային և հանրապետական փուլում... (փոխանակ՝ փուլերում):

2. Երեխաները բոլորը միաբերան շնորհակալություն հայտնեցին տնօրենին:

Երկրորդ նախադասության մեջ առկա է շարահասակ սխալ, պետք է լինի՝ «բոլոր երեխաները»: Նույնիսկ ավելորդ է «բոլոր» բառի հետ **ը** հոդի գործածությունը:

Նկատելի են նաև հոդերի գործածության սխալներ:

«Երկրի իշխանությունները ըմբռնումով են մոտենում հարցին» նախադասության մեջ պետք է գործածվեր՝ «իշխանություններն»:

Դժվար չէ իմանալ, որ ձայնավորով վերջացող բառերն ստանում են **ն** հոդ, իսկ բաղաձայնով վերջացողները՝ **ը**: Այս կանոնը կարող է չպահպանվել, եթե բաղաձայնով վերջացող գոյականին հաջորդում է ձայնավորով սկսվող բառ (այդ թվում նաև՝ **սպ, սկ, գգ, շտ** և այլ հնչյունականակցություններ, որոնց սկզբում լսվում է գաղտնավանկի **ը**): Այս փոփոխությունը չի կատարվում, երբ հարևան բառերի միջև գրավոր խոսքում նշանակվում է ստորակետ կամ բութ:

«Երբեք թող ոչ ոք չզգա այն ցավն ու **դառնությունն**, ինչ ինքն է զգացել» (փոխանակ՝ **դառնությունը**):

Արդյո՞ք կարիք կա խոսելու այն բոլոր վրիպումների ու կետադրական սխալների մասին, որ բազմիցս նկատում ենք:

«Չորս անչափահաս երեխաների հայր՝ Սամվել Կարապետյանն, իր ելույթում նշեց...»:

Երկու կետադրական տրոհության նշան է դրվել, երկուսն էլ՝ ավելորդ, կա նաև հոդի սխալ գործածություն:

Մենք գիտենք, որ մարդ նշանակող բոլոր գոյականներն անձեր են, այդ թվում՝ հասարակ և հատուկ անունները:

Անձերից բացի մնացած բոլոր գոյականները, այդ թվում և կենդանիները, հայերենում իրեն են՝ քար, գրիչ, շուն, կատու...

Սովորաբար կենդանի նշանակող իր ցույց տվող գոյականը հայցական հոլովում ուղղականի փոխարեն նմանվում է տրականին, ստանում անձի առում: (Նա գրկեց իր շանը: Ո՞ւմ):

Կամ անձ ցույց տվող գոյականը հայցական հոլովում որպես ուղիղ խնդիր գործածվելիս տրականի փոխարեն նմանվում է ուղղականին, ստանում իրի առում: (Ես ունեմ մեկ աղջիկ: Ի՞նչ):

Առաջադրանքում տրված «Ո՞վ ինչ ասաց» հարցը չպետք է կասկածի տակ առնել, երբ խոսքը վերաբերում է նապաստակին կամ սունկին, որոնք ընկերներ են, հետևաբար, կարող են ստանալ անձի հարց: «Նապաստակն ասաց...» նախադասության մեջ «նապաստակը» պատասխանում է **ո՞ւմ** հարցին:

Չեն բացառվում նաև շաղկապի և դերան-

վան գործածության սխալները:

Ահա այդպիսի նախադասություն.

«Ոչ միայն տնօրեններն են քննադատաբար մոտեցել այդ հարցին, այլ բոլոր ուսուցիչները»:

Ձուգադրական ոչ միայն... այլև, ոչ թե...այլ համադասական շաղկապների գործածությանը պետք է լուրջ ուշադրություն դարձնել: Սրանք տարբեր իմաստներ են արտահայտում, առաջինը՝ հավելման, երկրորդը՝ հակադրության:

Հաճախակի ենք հանդիպում **ով, որ** հարաբերական դերանունների սխալ գործածության դեպքերի:

1. Այդ գիրքը յուրահատուկ հուշարձան է հերոսի հիշատակին, ով միշտ ապրում է մեր կողքին:

2. Հրեյլանական մեդալով պարգևատրվել է նրա մայրը, որի հանձնումը կատարեց գրքի հեղինակը:

Դերանունների սխալ գործածության արդյունքում վերոնշյալ նախադասություններում նկատվում է նաև իմաստի աղճատում:

Մենք գիտենք, որ մտերիմ մարդուն **դուք** ով դիմելը պաշտոնականության և սառը վերաբերմունքի նշան է: Բայց հարգանքի հոգնակի է գործածվում՝ որպես խոսակցի նկատմամբ հարգանքի դրսևորման ձև, երբ նրան դիմում են հոգնակի **դուք** դերանունով՝ եզակի **դու-ի** փոխարեն: Այդ դեպքում **դուք**-ը և նրա հոլովածները (**ձեր, ձեզ...**) գրում ենք մեծատառով:

Ահա դերանվան մեծատառի գրության սխալ գործածություն.

«Շնորհակալություն Ձեզ, սիրելի կրտսեր բարեկամներ, դուք մեծ ուրախություն պատճառեցիք մեր փոքրիկներին: Թող կյանքում Ձեզ ուղեկցեն ուրախությունն ու երջանկությունը»:

Այս փոքրիկ տեքստում երկու անգամ մեծատառով գործածված **Ձեզ**-ը պետք է փոքրատառով լիներ, քանի որ խոսքն ուղղված է «կրտսեր բարեկամներին»:

Ընդհանրացնելով միտքս՝ ասեմ, որ կան ակնհայտ աղավաղումներ, որ բավարար գրագիտություն ունեցող դպրոցականն էլ է գիտակցում:

Կան և «անմեղ թվացող» կամ «խոր ընդհատակ» անցած այնպիսի խոտորումներ, որ միայն նուրբ և ուշադիր աչքը կարող է նկատել: Բոլոր դեպքերում այդ շեղումները բառակազմության կանոնների չիմացության, բառի առանձին բաղադրիչների թյուրըմբռնման, քերականական տարբեր օրինաչափությունների չիմացության արդյունք են:

Բառաձևի սխալները տարաբնույթ են: Լեզվական ամեն մի շեղում ի վերջո սկսվում է առանձին մարդկանց կողմից և հետո միայն խոտորների ավելի ու ավելի լայն շրջանակներ ընդարձակելով, դառնում ընդհանրական: Դրա դեմ պայքարելու հիմնական եղանակը նույն անհատական ջանքերի գնով ճիշտ, անխաթար ձևերին վերադառնալու ուղին է:

Բառերի իմաստային խառնաշփոթից խուսափելու համար յուրաքանչյուր ոք, ով իմանականում գրավոր խոսքի հետ գործ ունի, պետք է լայնացնի իր իմացության շրջանակը, կարողանա տիրապետել հայոց լեզվի քերականական օրինաչափություններին, որպեսզի քննարկման նյութ չդառնան նրա գործածած լեզվական աղավաղումները:

Ուղղակի ցավալի է, որ այդ շեղումները նկատում է նաև այսօրվա դպրոցականը, բայց ուրախալի է, որ ունենք աշակերտներ, որոնց հետ կարելի է խոսել և գրել գրագետ լեզվով, առանց լեզվական վթարների:

Նապաշա ՊՈՂՈՍՅԱՆ
Մարտիկների Վ. Բալայանի անվ. միջն. դպրոցի հ. լեզվի եւ գրակ. ուսուցչուհի

ԳՐԱԿԱՆ-ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ

ՊՈՒՅՆ ԼՈՒՅՍ Է, ԻՆՔՆԱՃԱՆԱԶՄԱՆ ԱՐԿԵՍ

ՏՆՈՒՄ ԵՎ ԲԱՆՈՒՄ

Աշխարհում ի՞նչը կարող է մրցել մանկանց, ավելի շուտ, դպրոցականների երգ ու ծիծաղի, ուրախ հանդեսների պատճառած ուրախությունների հետ, երբ նրանց միանում է աշունը իր ողջ հմայքով ու հեքիաթային անպատմելի անակնկալներով:

Դպրոցն իր դռները բացում է աշնան հետ, որը և չի հապաղում դպրոցականների հետ ներս մտնել, մասնակցել նրանց առաջին ողջույնին, ժպիտին ու զրնգուն աղմուկին: Աշունն ու դպրոցը, ասես մրցակիցներ, միասին սկսում են իրենց շնորհակալ գործը և խինդ պարզաբան շրջապատին, հայրենի բնությանն ու ողջ մարդկությանը: Մի՞թե կարող ես անտարբեր նայել աշնան աստիճանաբար փոխվող կերպարանքին, նրա քաղցրահամ ու գույնզգույն մրգերին, ոսկի հագած դաշտերին ու խայտաբերտ գույներով զարդարված անտառին: Իսկ երբ այգի ես մտնում, մոռանում ես հեքիաթներում գովաբանած դրախտը: Դրախտ է՝ որ կա:

Շահունյանի շրջանի Նոր Դարաչինար, Նոր Խարխափուտ, Քնարավան և Եղեգնուտ գյուղերի դպրոցականները տնօրենների և ուսուցիչների ղեկավարությամբ համատեղ անցկացրին «Ոսկի աշուն» փառատոնը (կազմակերպիչ՝ Մ. Փիլաճյան):

Քնարավանի իր հյուրընկալ դռներն է բացել, և ոսկի աշունը իր ոսկիներով հանդերձ, չորս գյուղերի դպրոցականների հետ մտել և տիրաբար հրավերք է անում: Սկսվում է մեծ հանդես, որին ներկա էին շրջվարչակազմի ղեկավար Վիտալի Դանիելյանը և կրթության բաժնի վարիչ Խորեն Վարդանյանը: Առաջինը ելույթ են ունենում Նոր Դարաչինար գյուղի դպրոցականները: Արուսյակը, Եման, Վահեն, Զմայակը, Աննան, Վարդը ու Նինան զարմանալի արտիստիկ կենցաղով նկարագրում են աշնան խենթացնող գեղեցկություններն ու բերք ու բարիքը, աշնան ոսկին, որ թափվում է նրանց մանկական շուրթերից: Նրանց երգն ու արտասանությունները, պարային ամարգել շարժումները հիացնում են պատճառում ունկնդիրներին:

Ապա ասպարեզ է բերվում Դարաչինարի «Թիթիզ» ծառը, որի ճյուղերից ճիկ են անում աշնան բոլոր մրգերը, որոնց մեջ քաղցրությունից ճաքած արցախյան կարմիր նուռը շողում է ու հատիկները ցուցադրում: Ապա ծառը ներկայացնում է վարդը:

Ես մի թիթիզ ծառ եմ աշնան, Արգեր ունեմ շատ բազմազան, Ամեն մեկից մի քիչ, մի քիչ, ճիկ են անում իմ ճյուղերից: Թիթիզ մի ծառ աշնանային, Բյուր մտքերս հեքիաթային, Եկե՛ք-եկե՛ք, մի՛ ամաչեք, Ճաշակեք ու ինձ ճանաչեք:

Ասես վարդի բերանով ծառն է խոսում ու բարիքները ցուցադրում, ասպա աշուն տատկին է նագում իր զամբյուղով, որի մեջ աշնան հասուն մրգերն են: Արուսյակ Ազարյանը՝ տատկիկ կերպարանքով, մրգերով լի զամբյուղով, աշնանային հրաշալի տեսքով հմայում է բոլորին: Նա առատորեն բաժին է հանում ներկաներին ամենամեծ նուռն ու տանձը:

Բենահարթակ են մտնում Նոր Խարխափուտի դպրոցականները: Զարդարված աշնանային շքեղությամբ, նազանքով ու կաքավաքայլ նրանք իրար հետևից շարվում են և հաճելի ձայնով գովաբանում աշունը իր ողջ պերճություններով:

Գեղեցիկ ու նագելի աղջիկների շուրթերից հնչում են երգեր ու խոսքեր, որոնք աշնանային գովություն ու ուրախություն են հաղորդում ներկաներին:

Աշունը յուրովի ու նոր երանգներով են ներկայացնում, նույն աշնան ոսկին է՝ միայն համեմակ Աշուն տատկիկ Իուդիֆին, Ռուզանի, Թամարայի, Ասիայի, Լիլիթի, Մարիամի հմայքով: Խենթացնող ու գեղեցիկ էր նրանց պարը: Թվում էր՝ աշնան փերիներ են ճախրում: Նրանք իրենց «Թիթիզ» ծառը ճյուղ առ ճյուղ մատուցեցին ներկաներին:

Ապա Քնարավանը ներկայացրեց «Ոսկի աշունը»: Նրանք նույնպես լավ պատրաստված, տանտիրոջ իրավունքով աշնան բարիքներն էին բաժանում ներկաներին՝ համեմակած երգ ու պարով:

Զերթը եղեգնուտի դպրոցականներին էր: Նրանք, աշունն առած իրենց մեջ, անպատմելի գեղեցիկ պարեցին, երգեցին ու գովաբանեցին: Ցուցադրեցին աշնանային նորածնություն, իսկ «Թիթիզ» ծառը, ճիշտ է, փոքր, բայց շատ խորհրդավոր ու բովանդակալից էր:

Զանելի էր չորս գյուղերի միատեղ տոնակատարությունը, որը եզրափակվեց աշնանային վալսի և ճախրող գույգերի պարով:

Միասնական աշխատանքն արդյունավետ էր. Զույս ունենանք, որ այն շարունակական կլինի:

Յուրաքանչյուր ՄԱՍԲԵՆԱՆ
Նոր Դարաչինարի դպրոցի ուսուցչուհի,
ժողովրդության գերագանցիկ

Մի առիթով ԶԶ վաստակավոր արտիստ Սարգիս Նաջարյանի հետ զրույցի ժամանակ հետաքրքրվեցի, թե մերօրյա բանաստեղծները որքանով են ընդգրկված նրա ելույթներում, և ում է նախընտրում ժամանակակիցներից, ամվանի ասունըրդն ասաց, որ երբեք բեմից չի փորձել նրանց կարգալ, բայց ռադիոյով մշտապես անդրադարձնում է: Իսկ պատճառն այն մտավախությունն է, որ եթե ժողովուրդը դեռ չի ճանաչում այդ արվեստագետին, ապա նրա ստեղծագործությունն այնքան ուժեղ և ազդեցիկ պիտի լինի, որ հնչի դասականի կողքին: Բացի այդ, անչափ մեծ է ասունըրդի պատասխանատվությունն այս պարագայում, ով կարող է բանաստեղծին կամ հայտնի դարձնել, կամ կործանել: Պատասխանատվության զգացումն ուղեցույց ունենալով, ինչ-որ տեղ և իրենց երիտասարդական ինքնավստահությամբ խանդավառ՝ Շուշիի Մ. Խանդամիրյանի անվան թատրոնը համարձակ քայլ կատարեց՝ բեմադրելով «Չարության ժամանակը» ներկայացումը Ռոբերտ Եսայանի պոեզիայի մոտիվներով:

Օրերս Ստեփանակերտի մշակույթի և երիտասարդության պալատը մեկտեղել էր պոեզիայի սիրահարներին. այստեղ էին ԼԴԶ ԿԳ նախարար Սլավա Ասրյանը, մշակույթի և երիտասարդության հարցերի նախարար Նարինե Աղաբալյանը, բանաստեղծի գրչակից ընկերները, ուսուցիչներ, դպրոցականներ, զինվորականներ: Զինա, երբ ընթերցողը հեռացել է գրքից, առավել ևս պոեզիայից, երիտասարդ դերասանների կողմից խիզախություն էր բեմադրել պոեզիա, հանդիսատեսին հասցնել մեր կողքին ապրող բանաստեղծի ասելիքը, դառնալ նրա խոհերի ու հույզերի թարգմանը: Եվ այն էլ այնպիսի բանաստեղծի, ում պոեզիան առաջին հայացքից «ոյուրամար» չես անվանի, ուստի ներկայացման ողջ ընթացքում տապալվելու մտավախությունն ու հաղթանակի հաջողությունը քայլում էին կողք կողքի: Զենց սա էլ գրավել է հանրապետության ժողովրդական արտիստ, բեմադրիչ Լ. Զարությունյանին. «Երբ տարածված կարծիքն էս ներքուստ հակադրվում են, այն դառնում է մարտահրավեր, գերիհնդի, որ ես կարողանամ ապացուցել հակառակը: Շատերի կարծիքով Ռոբերտի պոեզիան հեշտ ընկալվողներից չէ, անգամ նրա հարազատները ներկայացումից հետո զարմանքով հարցնում էին՝ սա իրենք են: Մենք շատ համարձակ քայլ ենք արել: Որպես ռեժիսոր՝ միշտ ինչ-որ բան ինձ չի բավարարում, քիչ է թվում, բայց երջանիկ են զգում, որ պոեզիա սիրող մարդիկ գնահատել են կատարված աշխատանքը»:

Ոչ մի լավ բան դատարկ տեղում չի ծնվում, և ուրախությամբ պիտի փաստենք, որ պոեզիայի թատրոնը հավակնում է դառնալ երիտասարդ խանդավառների սիրած բեմարվեստը: Սա այս ժամրով արված երրորդ ներկայացումն է: Առաջին անգամ, երբ դեռ նոր էր ստեղծվել Շուշիի թատրոնը (այն ժամանակ՝ «Աստղիկ» մանկապատանեկանը), և ներկայացում բեմադրելու միջոցներ ու գումար չունեին, բեմադրիչի խոստովանությամբ՝ աղքատությունը իրենց ավելի հմարամիտ դարձրեց, և «Գարուն» գրական-երաժշտական ներկայացումը դարձավ նրանց առաջնությունը:

կան ներկայացումը դարձավ նրանց առաջնությունը՝ նշված ձևաչափով: Շուրջ երկու ժամ տևողությամբ ներկայացումն ընդգրկում էր հայ դասական և ժամանակակից հեղինակների ընտրամին: Ապա եղեռնի 95-ամյակին նվիրված «Եռաձայն պատարագը» ծնվեց, որի հիմքում Պ. Սևակի համանուն պոեմն է: Որպես վերջաբան՝ պոեմի բեմադրությանը ներկուսվում է արցախյան թեման, որը ներկայացմանը հերոսական շունչ ու ոգի է տալիս: Իսկ վերջում հնչում են Արցախյան գոյապայքարում զոհված, ինչպես նաև ողջ մնացած ազատամարտիկների, Զայ Դատի պաշտպան օտարազգի նվիրյալների անունները:

«Այս ամբողջը հեմված է եղել սիրո վրա»,-



բեմադրությանը նախորդող աշխատանքներին անդրադարձնալով՝ մանրամասնեց Լ. Զարությունյանը: Նա ասաց, որ «Չարության ժամանակը» գիրքը նվեր է ստացել հեղինակից, իսկ ընթերցելուց հետո այն թերթել են նաև երեխաները, հավանածները սովորել: Ներկայացման համար դարձյալ միջոցներ չունեին և որոշեցին դա բեմ հանել, քանի որ պոեզիայի բեմադրությունը կարելի է իրականացնել սուղ միջոցներով: «Այն ավելին չի պահանջում, քան հոգու ու սրտի միասնությունն և սեր ու նվիրումը դեպի մատուցողը նյութը»,- վստահեցնում է բեմադրիչը: Զատկանշական է պարզ ու անպաճույր բեմական հարդարանքը, ընկած ու հառնող խաչքարի խորհուրդը, իսկ ծածանվող ճերմակ թուղն ու վառվող մոմերը խորհրդանշում էին Լույսը, որն ուղեկցում է ներկայացմանը սկզբից մինչև վերջ: Պոեզիան էլ լույս է, որը լուսավորում է մեր ներաշխարհը, օգնում ճանաչել ինքներս մեզ:

Այս ներկայացմամբ խումբը ելույթներ է ունեցել Երևանում, Արմավիրում, Գորիսում, ԱրՊՀ-ում: Լ. Զարությունյանին հաջողվել է գրքի առանձին հատվածներն այնպես շաղկապել, որ այն կրու կառույցի տպավորություն է թողնում: Ի դեպ՝ դա զարմացրել է նաև հեղինակին, ով ներկայացումից հետո խոստովանել է, որ ներքին կապի շնորհիվ այն պոեմի մասն է հնչեց:

Շատ դժվար է պոեզիան բեմից ներկայացնելը, և պատահական չէ, որ ոչ բոլոր դերասաններն են (անգամ ճանաչված ու կոչումով) ձեռք գարկում ասունըրդին: Պոեզիայի թատրոնի հաջողվածությունը մեծապես կախված է դերասանից, ով նախ լավ ընթերցող է, ապա՝

միջնորդ հեղինակի ու հանդիսատեսի միջև: Ուրախալի է, որ տասը երիտասարդ, ձեռք անռելով գիրքը, տրվել են ինքնատուգումների՝ ներքին աղետներ գտնելով իրենց ու հեղինակի հոգեաշխարհում, «տառապանքի ճրագը» ավերի մեջ անցել նրա հետ բառից բառ՝ «լուսավորելով հիշողությունը ճանապարհների»: Զիշողությունն անթացույց դարձրած՝ անցել են պատմության քառուղիներով՝ հնչեցնելով Արցախի ազատագրական պայքարի երգը: Յուրաքանչյուրը կարեցածին չափ փորձ է արել բացահայտել բանաստեղծական պատկերները, վերծանել տողի ու տողատակի ասելիքը, թափանցել բառի խորքերն ու համոզվել, որ «Բառերը երբեք չեն հագնում

դիմակ, ներկ կամ գրիմ»: Թեպետ խումբն առաջին քայլերն է անում Բեմ կոչվող բարձունքի ճանապարհին, բայց շնորհալիներն արդեն ակնառու են: Թեպետ ոչ բոլորին է հաջողվել հաղթահարել չափածո խոսքի մատուցման դժվարությունները, բայց ողջունելի է նրանց ջանադրությունը՝ բեմից մատուցելու մաքուր ու գեղեցիկ հայերեն խոսք: Իսկ ամենագովելին այն է, որ դաշինում գտնվող պատանիներն ու երիտասարդները առնչվեցին բանաստեղծության հմայքին, որն, անշուշտ, մի հետք կթողնի նրանց հոգում:

Ռոբերտ Եսայանը կարևորեց մշակութային մթնոլորտը, որը հնարավոր դարձրեց նման երեկոյի անցկացումը և պայմանավորեց նրա հաջողությունը: «Արցախի գրողները տասնամյակներ շարունակ պայքարել են այսօրվա համար, որպեսզի ստեղծվի այս մթնոլորտը՝ հանուն Արցախի մշակութային ընդգծված դիմագծի, որովհետև ոչ մի երկրի չի կարող ուժեղ լինել, եթե չունի մշակութային դիմագիծ, ինքնատիպ դեմք, աշխարհի հետ խոսելու իր ձևը, իր ձայնը: Այսօր այդ ձևերից մեկին ականատես դարձանք, պոեզիան մատուցվեց թատրոնի միջոցով, երկու արվեստների սինթեզը առավել ներգործում դարձրեց պոեզիայի ազդեցությունը ունկնդրի վրա»: Բանաստեղծի խոստովանությամբ՝ իրեն նույնպես հուզել է ներկայացումը, քանի որ թատերախմբին հաջողվել է կերպավորել այն հույզերն ու զգացողությունները, որոնք ապրում են իր ստեղծագործություններում, բացահայտել այդ ոգին և հանձնել հանդիսատեսին:

Լույսի ու ցավի, մաքառումների ու հաղթանակի, անցողիկի ու հավիտենականի մասին է «Չարության ժամանակը» ներկայացումը, որը հաստատում է այն ճշմարտությունը, թե «Տարածքը դեռևս Զայրենիք չէ»: Տարածքը Զայրենիք է դարձնում այնտեղ ապրող ժողովրդի Ոգին, որը խոսքոված է նրա ստեղծած մշակույթի մեջ, ինչով էլ պայմանավորվում է բանաստեղծի լավատեսությունը. «Չավերժի մեջ ենք, մենք կանգամ չունենք»

Մելանյա ՄԻՆՈՆՅԱՆ

ԶԾՁԵՄՄ ՍԻՏՈՒՄ ԵՎ ԹՊՄԵՆ

Լույս է տեսել ԱրՊՀ գրականության և լրագրության ամբիոնի պրոֆեսոր, բանասիրական գիտությունների թեկնածու Լեւոն (Յեղիմե) Գրիգորյանի նոր «Արցախյան մտայնի հեծյալը» աշխատությունը, որը եղինակի թվով 12-րդ գիրքն է: Սենագրության վեց գլուխ-բաժիններում համաձայնորեն քննության են առնվում անվանի գրող Կոմիտաս Դանիելյանի արձակ (պատմվածքներ, ավանդապատումներ, «Արցախը՝ չսանձած մտույց» փաստավավերագրական վեպ) և դրամատիկական ստեղծագործությունները՝ Արցախի ազգային-ազատագրական պայքարին առնչվող «Պըլը Պուլին Մոսկովում», «Մենք մեր սարերն ենք» և Մեծ եղեռնի բեմայով գրված «Տո լաճ տնավեր» պիեսները: Վերջին երկուսը հաջողությամբ բեմադրվել են Ստեփանակերտի Վ. Փափաջյանի անվան դրամատիկական թատրոնում:

- Արցախի ու արցախյան մասին է հիմնականում գրում Կոմիտաս Դանիելյանը: Զնայած դրան, «Նրա ստեղծագործություններն ընթերցողի հոգում տարածքային սահմանափակման հետք չեն թողնում: Դանիելյանի ստեղծած կերպարներն իրենց հուզաշխարհով, արարքներով, պարզամտությամբ, բարությանը ու հավատով ստանում են

համահայկական փայլ»: Ինչ էլ գրել է, ինչ ստեղծել է Կոմիտաս Դանիելյանը, - եզրակացնում է հեղինակը, - գրել է սրտի թելադրանքով, ճշմարիտ գրողի և նվիրյալ քաղաքացու ազնիվ դավանանքով՝ երբեք տուրջ չտալով ժամանակի վայրիվերումներին, պղտոր, անցողիկ հոսանքներին՝ թե՛ կյանքում, թե՛ գրականության մեջ, մարդկային ու ազգային արժանապատվությունը վեր դասելով ամեն ինչից:

Գրքի հավելվածներում տեղ են գտել Կ. Դանիելյանի հետ կայացած՝ տարբեր տարիների հարցազրույցներից մի քանիսը, որոնք հրապարակվել են պարբերական մասնույում:

Մենագրությունը լույս է ընծայվել ԶԶ ՊԱԱ «Գիտություն» հրատարակչությունում և նվիրված է Կոմիտաս Դանիելյանի ծննդյան 65-ամյակին: Խմբագիրն է բանասիրական գիտությունների թեկնածու Վահագն Սարգսյանը, գրախոսը՝ բանասիրական գիտությունների թեկնածու Վարդան Գևրիկյանը:

Լաուրա ԳՐԻԳՈՐՅԱՆ

ԼՈՒՍԱՐԱՐ
հմբագիր՝
ՍԿԵՏԼԱՆԱ ԽԱՉԱՏՐՅԱՆ

Զիմնադիր՝
«Լուսարար»
ՓԲԸ

Ստեփանակերտ,
Հ. Թումանյան փ. 111, ☎ 94-38-99,
E-mail: gorctert@mail.ru

Մեջբերումների և փաստական տվյալների ստուգությունն ապահովում են հեղինակները: Թերթը ընթերցողների հետ գրագրություն վարելու պարտավորություն չի ստանձնում:

Տպագրվում է Ստեփանակերտի «Դիզակ պլյուս» ՍՊԸ-ում: Տպագրական՝ 3205: Ծավալը՝ տպագրական 2 մամուլ: Ստորագրված է տպագրության՝ 19.12.2012թ.:

«Լուսարար» թերթը տարածվում է միայն բաժանորդագրությամբ:

ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆ

Ենթահավելված
Լեռնային Ղարաբաղի Յանտարային կրթության և գիտության նախարարի 2012
թվականի օգոստոսի 16-ի N145/Ն և Լեռնային Ղարաբաղի Յանտարային կրթության
պաշտպանության նախարարի 2012թվականի օգոստոսի 18-ի N 246 - Ն «Հիմնական,
միջնակարգ հանրակրթական դպրոցներում, վարժարաններում, կրթահամալիրներում,
նախնական մասնագիտական (արհեստագործական) և միջին մասնագիտական
ուսումնական հաստատություններում սովորողների նախազորակոչային պատրաստության
կանոնադրությունը հաստատելու մասին» համատեղ հրամանով հաստատված
կանոնադրության

IV. ՈՒՍՈՒՄՆԱՆՅՈՒԹԱՏԵՆՆԻԿԱԿԱՆ ԲԱԶԱՅԻ ԱՌԿԱՅՈՒԹՅՈՒՆ

անվանումը առկայությունը
ժանրություն
Նախնական զինվորական պատրաստության դասաստեղծակ
Զենքի պահպանման սենյակ
Հրաձգարան
Ուսումնական համալիր (վայր)՝
Մարտավարության
Քաղաքացիական պաշտպանության մարզահրապարակ
Շարային պատրաստության հրապարակ
Հրաձգության կանոնների և հնարքների կատարման հրապարակ
Գործնական պարապմունքի վայրեր
Օրապահի
Ժամապահի
Զենքի մաքրման և յուղման տեղ
Մարմնակրթության պատրաստության, ուժային վարժանքների հրապարակ,
մարզադահլիճ
Մարտական փառքի սրահ (սենյակ)
Զենքի հափշտակման
դեպքեր
երբ է կատարվել, քանակը
տեսակը, պատճառը և հետախուզման արդյունքները

Ձև 1

Ա Ս Փ Ո Փ Ա Թ Ե Ր Թ

ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ «ՆԱԽՆԱԿԱՆ ԶԻՆՎՈՐԱԿԱՆ ՊԱՏՐԱՍՏՈՒԹՅՈՒՆ» ԱՌԱՐԿԱՅԻ ԱՆՑԿԱՑՄԱՆ ՄԱՍԻՆ

ուսումնական հաստատության անվանումը, գտնվելու վայրը
Տնօրեն
Անուն, ազգանուն, երբևիցե և աշխատում այդ պաշտոնում
Զինղեկ
Զինվորական կոչում, անուն, ազգանուն, ծննդյան թիվ
կրթություն (ընդհանուր, զինվորական) մինչ պահեստ արձակվելը
զբաղեցրած զինվորական պաշտոնը, երբևիցե և զբաղեցնում
զինվորական ղեկավարի պաշտոնը

I. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. Նախնական զինվորական պատրաստությունը անցկացվում է
դասարաններում (խմբերում), ուսման մեջ ընդգրկված
սովորողներ, այդ թվում պատանիներ:
2. Վերջին 3 տարվա ընթացքում «Նախնական զինվորական պատրաստություն» առարկայի
վիճակը ուսումնասիրվել է (ստուգվել է)
ստուգող կազմակերպությունը, գտնվելու վայրը
ստուգման ժամկետը, ստացած գնահատականը

II. «ՆԱԽՆԱԿԱՆ ԶԻՆՎՈՐԱԿԱՆ ՊԱՏՐԱՍՏՈՒԹՅՈՒՆ» ԱՌԱՐԿԱՅԻ ՎԻՃԱԿԸ ԸՆԹԱՑԻԿ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՏԱՐՈՒՄ

1. Նախնական զինվորական պատրաստությունը ծրագրորդ ստուգման օրը կատարվել է
%-ով, դասերին հաճախումը կազմում է %:
2. Սովորողների կողմից ծրագրի յուրացման աստիճանը տնօրինությունը ստուգել է
Ժամկետը, ծրագրի բաժինը, դասարանը, ստուգված սովորողների թիվը, ստուգման
գնահատականը
3. Տնօրենը ստուգել է զինղեկի անցկացրած
պարապմունքը և գնահատել է:
4. Ուսումնական պարապմունքները և ինքնաձիգ զենքով հրաձգությունը մարտական
փամփուշտներով անցկացվել են (պլանավորվել են)
Ժամկետը
գտնվելու վայրը և մեթոդը

5. «Նախնական զինվորական պատրաստություն» առարկայի վիճակը քննարկվել է
մանկավարժական խորհրդում
խորհրդակցության ժամանակաշրջանը
արդյունքները

III. ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ԶԵՆՔԻ ԵՎ ԱՅԼ ՑՈՒՑԱԿԱՆ ԳՈՒՅՔԻ ԱՌԿԱՅՈՒԹՅՈՒՆ

Ինքնաձիգ հատ,
Փոքր տրամաչափի հրացան հատ,
Չեռքի նռնակ հատ,
Ինքնաձիգի ուսումնական փամփուշտներ հատ,
Հրամանատարական արկղիկ հատ,
Համազորային պաշտպանական հագուստ լրակազմ (կոմպլեկտ),
ճառագայթային չափասարք հատ,
Քիմիական հետախուզման գորսարք հատ:
Պակասում են՝
թվարկել
Ընել պատճառը

«Նախնական զինվորական պատրաստություն» առարկայի ուսումնական
նյութատեխնիկական բազան գնահատվում է:

V. ՏՎՅԱԼՆԵՐ ՈԱԶՄԱՀԱՅՐԵՆԱՍԻՐԱԿԱՆ ՂԱՏԻՐԱԿՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

1. Ուսումնական հաստատությունում գործում են
պաշտպանական խմբակներ
ինչ խմբակներ են գործում
2. Ավարտական դասարանների (խմբերի) պատանիներից բազմամարտի նորմերը
հանձնել են
3. Վերջին 3 տարում ռազմական ուսումնական հաստատություններ են դիմել
շրջանավարտ: Նրանցից ընդունվել են մարդ:
4. «Նախնական զինվորական պատրաստություն» առարկայի պարապմունքներին
մասնակցող սովորողներից իրավախախտումներ են թույլ տվել
մարդ

VI. ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ ԵՎ «ՆԱԽՆԱԿԱՆ ԶԻՆՎՈՐԱԿԱՆ ՊԱՏՐԱՍՏՈՒԹՅՈՒՆ» ԱՌԱՐԿԱՅԻ ՎԻՃԱԿԻ ԳՆԱՀԱՏՈՒՄ

Տ Ն Օ Ր Ե Ն
201_թ.
ստորագրություն

Ե Զ Ր Ա Կ Ա Ց ՈՒ Թ Յ ՈՒ Ն

I. ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ «ՆԱԽՆԱԿԱՆ ԶԻՆՎՈՐԱԿԱՆ ՊԱՏՐԱՍՏՈՒԹՅՈՒՆ» ԱՌԱՐԿԱՅԻ ՎԻՃԱԿԻ ԱՏՈՒԳՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ

ուսումնական հաստատության լրիվ անվանումը, գտնվելու վայրը
Տնօրեն
ազգանուն, անուն
Զինղեկ
ազգանուն, անուն
պաշտոնավարման ժամանակաշրջանը, երբ է անցել ուսումնական հավաքներ,
որակավորման դասընթացներ
1. Պլանավորումը
համապատասխանում է, չի համապատասխանում
ծրագրի պահանջներին
Թերությունները
թվարկել
2. Ծրագրի կատարումը, ստուգման օրը
%:
Ինչ հարցեր չեն ուսումնասիրվել և ինչու, պատճառները
3. Պարապմունքներին հաճախումների միջինը
%,
ստուգման օրը
%:
Զիանախելու հիմնական պատճառներ
:

Ձև 2

ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆ

II. «ՆԱԽՆԱԿԱՆ ԶԻՆՎՈՐԱԿԱՆ ՊԱՏՐԱՍՏՈՒԹՅՈՒՆ» ԱՌԱՐԿԱՅԻ ՊԱՐԱՊՄՈՒՆՔՆԵՐԻ ԾՐԱԳՐԻ ՅՈՒՐԱՑՄԱՆ ՈՐԱԿԸ ԳՆԱՀԱՏՎՈՒՄ Է ԱՅՂ ԹՎՈՒՄ ԸՍՏ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ԾՐԱԳՐԻ ԲԱԺԻՆՆԵՐԻ (ԹԵՄԱՆԵՐԻ)

Table with 8 columns: Ծրագրի բաժիններ, Դասարան (խումբ), Ստուգվել են, սովորողների թիվը, Գնահատականներ (գերազանց, լավ, բավարար, անբավարար), Ընդհանուր գնահատական, Ընդհանուր ստուգվել է, Սովորող %

Սովորողները բավարար չափով չեն յուրացրել (ըստ ծրագրի նշել յուրաքանչյուր բաժնի հարցերը)

III. ԲԱԶՄԱՍՈՒՄԻ ՆՈՐՄԱՆԵՐԻ ՀԱՆՁՆՈՒՄԸ

Ստուգվել է _____ սովորող: Նրանցից նորմաները հանձնել են _____%, այդ թվում՝ պատճառով վրա ձգում վարժությունից _____%, վազքից _____%, Նոնակների նետումից _____%: Թերությունները _____:

IV. «ՆԱԽՆԱԿԱՆ ԶԻՆՎՈՐԱԿԱՆ ՊԱՏՐԱՍՏՈՒԹՅՈՒՆ» ԱՌԱՐԿԱՅԻ ՊԱՐԱՊՄՈՒՆՔՆԵՐԻ ԱՆՅԿԱՑՄԱՆ ՈՐԱԿԸ ԳՆԱՀԱՏՎՈՒՄ Է

- 1. Պարապմունքների թեման:
2. Դրական, առավել բնութագրական, ուշադրության և տարածման արժանի աշխատանքը
թերությունները
այդ թվում՝ դասի անհամապատասխանությունը
դասի վատ կահավորվածությունը, նյութատեխնիկական բազան թերի
օգտագործելը, դասի դաստիարակչական աշխատանքի բացակայությունը ընթացքում և այլն

V. ՈՒՍՈՒՄՆԱՆՅՈՒԹԱԿԱՆ ԲԱԶՄԱՅԻ ՎԻՃԱԿԸ ԳՆԱՀԱՏՎՈՒՄ Է

- 1. Դրական աշխատանք
որն է արժանի ուշադրության և տարածման
և առավել բնութագրական է
2. Պակասում է
թվարկել պակաս տարրերը, ամբողջական կառույցները և այլն
3. Թերությունները
բացակայում են, չեն համապատասխանում կանոնադրական պահանջներին
թվարկել սարքավորումների թերությունները, նշել զենքերի վիճակը
նշել թերությունների պատճառները

VI. ՈԱԶՄԱՀԱՅՐԵՆԱՍԻՐԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԻ ՎԻՃԱԿԸ ԳՆԱՀԱՏՎՈՒՄ Է

- 1. Աշխատանքային պլանի (համապատասխան բաժնի) առկայությունը
կազմված է, թե՛ ոչ, թերությունները, դրական,

Ժամկետների պահպանումը, միջոցառումների ուղղվածությունը

- 2. Մարտական փառքի թանգարանների, սրահների, սենյակների առկայությունը և կահավորվածությունը
նշել՝ ծառայում են դրանք իրենց նպատակին, թե՛ ոչ,

ինչ աշխատանքներ են կատարվում

Դիտողական, քարոզչական նյութերի առկայությունը
ձևավորումը
ինչ հարցեր են լուսաբանվում և չեն լուսաբանվում, դրանց

բովանդակությունը, հրատապությունը և այլն

- 3. Գործնական կապերը զորամասերի հետ
կապերի առկայությունը, համատեղ աշխատանքը

- 4. Կապը այն զորամասերի հետ, որոնցում ծառայում են շրջանավարտները
նշել առկայությունը և ձևերը

- 5. «Նախնական զինվորական պատրաստություն» առարկայից ունեցող պատանիների կողմից իրավախախտումները
եղել են, թե ոչ, պատճառները

VII. «ՆԱԽՆԱԿԱՆ ԶԻՆՎՈՐԱԿԱՆ ՊԱՏՐԱՍՏՈՒԹՅՈՒՆ» ԱՌԱՐԿԱՅԻ ԴԵԿՎԱՐՄԱՆ ՎԻՃԱԿԸ

- 1. Ուսումնական հաստատությունում արձակված հրամանները «Նախնական զինվորական պատրաստություն» առարկայի վերաբերյալ

նշել բովանդակությունը, ժամկետը

- 2. Մանկավարժական խորհրդի աշխատանքը
որոշումները, արձանագրությունները
կատարման ժամկետները և ընթացքը

- 3. Առարկայական մեթոդական հանձնաժողովի աշխատանքը
նշել
առկայությունը և հակիրճ բովանդակությունը

- 4. «Նախնական զինվորական պատրաստություն» առարկայի անցկացման վերահսկողություն
դասարանների, դեկավարների կողմից պարապմունքներին մասնակցելու,
ստուգումներ կատարելու աշխատանքը, վերահսկողության արդյունքները:

- 5. Ռազմասպորտային տոնակատարության անցկացումը
պլանավորումը

նախապատրաստական աշխատանքը, արդյունավետությունը

Ընդհանուր գնահատականը

Առաջարկություններ «Նախնական զինվորական պատրաստություն» աշխատանքի բարելավման վերաբերյալ

ՍՏՈՒԳՈՂ (ՍՏՈՒԳՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ)

զինվորական կոչումը, ստորագրություն, ազգանուն

զինվորական կոչումը, ստորագրություն, ազգանուն

զինվորական կոչումը, ստորագրություն, ազգանուն

ՈՒՍԱԳՆԱՑՈՒԹՅՈՒՆ

Հարգարժան Լարիսա Արմենակի
ԼՂՀ կրթության և գիտության նախարարությունը ջերմորեն շնորհավորում է Ձեզ՝ 65-ամյա հոբելյանի առթիվ:

Լարիսա Սարգսյանն արդեն 42 տարի է՝ աշխատում է կրթության համակարգում՝ արժանվույնս անցնելով իր ճանապարհը կենսաբանության ուսուցչից մինչև Ստեփանակերտ քաղաքի ուսուցիչների արհմիության նախագահ, այնուհետև՝ ԼՂՀ կրթության և գիտության նախարարության գլխավոր մասնագետ, պետական տեսուչ: Դրանք տքնաջան աշխատանքի ոչ դյուրին, բայց արգասաբեր տարիներ են:

Մանկավարժական աշխատանքը նրա սիրած գործն է, կյանքի իմաստը: Լարիսա Սարգսյանի անձնային որակները, բնավորության պարզությունը նրա հետ շփվող յուրաքանչյուրի հարգանքն են հարուցում:

Շնորհավորելով Ձեզ, տիկին Սարգսյան, մաղթում ենք քաջամոռություն, իսկ Ձեր զավակներին ու թոռներին, որոնց նվիրել եք Ձեր կյանքը՝ երջանկություն և բարեկեցություն:

Շնորհակալություն՝ Ձեր աշխատանքի ու բարի սրտի համար:



ման բաժնի գլխավոր մասնագետն էր: Արցախյան պատերազմի տարիներին Ս. Մխիթարյանը հող հայրենիի պաշտպանների շարքում էր: 2011թ. նա պարգևատրվել է «Մարտական ծառայություն» մեդալով: Վերջին տարիներին Ս. Մխիթարյանը ղեկավարում է կրթության պետական տեսչության բաժինը: Կրթական հաստատությունների տեսչավորման, դպրոցի ղե-

ԼՂՀ ԿԳ նախարարության աշխատակազմն ի սրտե շնորհավորում է ԿՊՏ պետական տեսուչ, հայոց լեզվի և գրականության գլխավոր մասնագետ Գայանե Գրիգորյանին՝ ծննդյան 55-ամյակի կապակցությամբ:

Գայանե Գրիգորյանը աչքի է ընկնում որպես հաստատական և նպատակալույս, պատասխանատվությամբ լի, ուղղամիտ, արդարամիտ և ճշմարիտ, անաչառ ու համեստ անձնավորություն:

Նրա խոսքը տարբերվում է ներքին ուժով, համոզվածությամբ: Ասումները վարպետ է, մարդկային բոլոր լավագույն որակները կազմում են նրա հոգու հարստությունը: Նրանք, ովքեր ճանաչում են Գայանե Գրիգորյանին, բարձր են գնահատում նրա անձնային որակները և երախտապարտ են նրան՝ բազմամյա բարեխիղճ, անխոց աշխատանքի համար: Անմիջական է բոլորի հետ, պարզ է, անկեղծ, բարյացակամ, զինված մեծ համբերությամբ:

Գայանե Գրիգորյանը խորապես տիրապետում է իր մասնագիտությանը, գիտի հայ ժողովրդի ավանդույթները, մշակույթն ու կենցաղը: Միշտ շրջապատված է մայրենիի ուսուցիչներով, իր գործընկերներով և վայելում է նրանց սերն ու հարգանքը:


Մեր շատ սիրելի Գայանե՛, շնորհավորելով Ձեզ, ի խորոց սրտի ցանկանում ենք ընտանեկան երջանկություն, ստեղծագործական մեծ հաջողություններ: Թող Աստված Ձեզ առողջություն, երկար տարիների կյանք պարգևի:

ԼՂՀ ԿԳ նախարարության կուլեկտիվն ի սրտե շնորհավորում է Մանվել Մխիթարյանին՝ ծննդյան 55-րդ տարեդարձի առթիվ:

Իր կյանքի 28 տարին Մանվել Մխիթարյանը նվիրել է մատաղ սերնդի դաստիարակությանը, ուսուցանել Հայաստանի և Արցախի պատմությունը:

Իր կոչումը նա որոշել է դեռ դպրոցական տարիներին՝ Ստեփանակերտի հ. 1 դպրոցում սովորելու ժամանակ: Նրա ման-

կավարության և ուսուցիչների հետ աշխատանքի ընթացքում միշտ զգացվում է նրա բարեկրթությունը, մանկավարժական տակտը, պարզությունը շփման մեջ: Վերստին շնորհավորելով հոբելյարին՝ ցանկանում ենք նոր հաջողություններ անձնական կյանքում և աշխատանքում:



կավարության և ուսուցիչների հետ աշխատանքի ընթացքում միշտ զգացվում է նրա բարեկրթությունը, մանկավարժական տակտը, պարզությունը շփման մեջ: Վերստին շնորհավորելով հոբելյարին՝ ցանկանում ենք նոր հաջողություններ անձնական կյանքում և աշխատանքում:

ԼՂՀ կրթության և գիտության նախարարություն
ՈՒՍՈՒՑՅՈՒՆ ԻՐԱՎԱՆ ԿԵՐՊԱՐԸ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԴԱՍԵՐԻՆ (Մասնագիտական-տեսական)

Ուսուցման գործընթացում բազմաթիվ արդիական խնդիրներ կարելի է հնչեցնել:

Իմ համոզմունքով արդիական հնչողություն պիտի ունենա նաև ուսուցչի ապրած կյանքը: Մենք գիտենք, որ մատաղ սերնդի համար կյանքի լավագույն դպրոց է հայոց մեծերի կյանքն ու գործունեությունը՝ սկսած սրբազնագույն Մաշտոցից: Նրանց կենսափորձն ու իմաստությունը, բազում խորհրդածությունները կրթության, գրականության, արվեստի գանազան բնագավառների մասին այսօր էլ գրավիչ իմաստություններ են և արդիական հնչողություն ունեն:

Բայց որքանով է ուսուցիչն իր իրական կերպարով՝ կյանքով ու գործունեությամբ, իր ապրելակերպով մասնակիցը դառնում գրողի կյանքի կամ գրական երկի վերլուծությանը:

Միշտ էլ փորձել եմ մանուկները եզերել գտնել տվյալ ժամանակաշրջանի,--- գրական ստեղծագործության մեջ տեղի ունեցած այս կամ այն դեպքի, գրողի կամ գրական հերոսի ապրած կյանքի միջև, համոզված, որ դասապրոցեսում դրանք դառնում են մարդկային լավագույն հատկությունների դաստիարակության գեղեցիկ օրինակներ:

Ամեն անգամ, երբ աշակերտներին խորհուրդ եմ տալիս, որ գեղեցիկ գրեն, հիշում եմ ամենայն հայոց բանաստեղծի իմաստուն միտքը, որ ձեռագիրն էլ բնավորություն է ձևավորում:

Բայց այսօր այդ ո՞ր մի ծնողը կվարեր թունամյանի մնա: Երբ նա Վանից ստացել էր տղայի՝ Արտիկի մամակը, առանց կարդալու ետ էր ուղարկել՝ նամակի վրա գրելով. «Գրիր ինչ ես գրել»:

Հետպատերազմյան շրջանի իմ մանկավարժական աշխատանքային գործունեության առաջին ուստարում, վերջին մատարանին նստած, 4-րդ դասարանի աշակերտուհի փոքրիկ Արմինեի պատկերն առաջօր իմ հիշողության մեջ է գամվել. որը ծանր հիվանդությունից հետո մահացավ: Այդ օրերին որքան սուր զգացի Չարենցի ապրած զգացողությունը, երբ 1919-1920թթ. որպես ուսուցիչ աշխատում էր Կարսի գյուղական դպրոցներից մեկում: Իր աչքի առջև անընդհատ սովից մահանում էին դպրոցի երեխաները: Նրանց դպրոցի դեմքերն ամբողջ կյանքում չհեռացան բանաստեղծի մտապատկերից: Շատ լավ հասկանում էի, թե ամեն օր դասամատյանում աշակերտների անունները պակասելուց Չարենցն ինչպիսի սարսա---ելի լարված վիճակ էր ապրել:

Այդ ուսումնականում ամեն անգամ, մտնելով այդ դասարան, որքան ծանր ապրումներ էի ունենում, երբ դասամատյանում՝ նրա անվան դիմաց, դատարկ վանդակներ էին տեսնում:

Երբ Գ.Սահարի եմ անցնում, որը Երևանի որբանոցներից մեկում դասավանդող Չարենցի սանն էր, ցավի զգացողությունը պատում է իմ հոգին, և ամեն անգամ ավելի լավ եմ ընկալում հորս ապրումները, երբ վաղ հասակից, ծնողների կորցնելով, նրան քրոջ հետ տարան որբանոց: Իսկ երբ գաղթի ճանապարհին, պատմում եմ, որ Սահարին քրոջն էր կորցրել, փորձում եմ ամեն անգամ մանուկները եզերել գտնել գրողի և հորս չակատագրի միջև: Նա էլ էր թուր կորցրել, որին այդպես էլ չգտավ, քանի որ նրանց տարբեր որբանոցներում էին տեղավորել /տղաների և աղջկաների/:

Որբանոցային դառը կյանքի մասին մանրամասնություններ այդպես էլ չպատմեցի հայրս, բայց մի բան գիտեմ միայն, որ նա Հայաստանի տարբեր քաղաքների որբանոցներում էր եղել: Իրենից մեկուկես տասնամյակ առաջ այդ որբանոցներում ապրած Գ.Սահարին հետագայում իր «Ինքնակենսագրականի» մեջ պիտի գրեր, «1915թ. ես

ԻàòÐÆÆ ÎÆðÖàòÐ

Գիշտ է, ես 9-րդ դասարանից դուրս եմ եկել Բերձորի Վահան թեքեյանի անվան միջնակարգ դպրոցից և ուսումս շարունակում եմ Երևանի Փ. Թեքեյանցյանի անվան գեղարվեստի թուեզի դիզայնի բաժնում, սակայն մտովի միշտ իմ դասարանի հետ եմ, իսկ Բերձոր գալուս դեպքում այցելում եմ դպրոց, մասնակցում դասերին: Վերջերս մեր դասարանիցները որոշել էին այցելել մեր երկրի որևէ գեղատեսիլ կամ պատմական վայր: Հայրս, որ լավ է ճանաչում Քաջաթաղի և Շուշիի շրջանները, առաջարկեց մեկօրյա հանգիստն անցկացնել Շուշիի կիրճում՝ Հունուտի ձորում, որտեղ պահպանվել են հնամենի տներ, կամուրջներ: Մեր դասուկի և առաջին ուսուցչի հետ Սայաթ քեռու մեքենայով դուրս եկանք Բերձորից և հասանք Մխիթարաշեն կոչվող գյուղը: Այստեղից ճանապարհը պետք է շարունակեինք ոտքով: Նախորդ գիշեր տեղացած անձրևից ճանապարհը ցեխապատ էր, բայց եղանակը բարենպաստ էր: Մեզ դեպի Հունուտի ձոր ուղեկցեց Մխիթարաշենից Սևակ անունով մի երիտասարդ: Ընտ-



րեցինք մի բացատ, որտեղ պետք է հանգստանայինք: Սակայն շտապում էինք թուեք առաջ տեսնել Հունուտի ձորի հրաշքներից մեկը՝ հավերժ կամաչ քարանձավը, որի վրայով ջրվեժ է իջնում: Մի արահետով շարժվեցինք առաջ: Ճանապարհի մի մասն անամ-վանելի էր, և ստիպված անցնում էինք Կարկառ գետի միջով: Վերջապես հասանք տեղ. երկու գերան գետի ափերը կապում էին իրար: Մտնում ենք քարանձավ: Դարերի ընթացքում բնությունը գեղատեսիլ ու հետաքրքիր քանդակներ է արել քարանձավի առաստաղին ու պատերին: Ներսում էլ կարծես անձրև էր մաղում, իսկ քարանձավի մուտքը պատված է ջրե վարագույրով: Երկար ժամանակ ուսումնասիրում էինք քարանձավը, տարածքը, լուղացանք գետում և վերադարձանք հիանալի տպավորությամբ: Իր վեհությամբ ու գեղեցկությամբ ավելի հմայիչ էին կիրճի ուղղաձիգ, բարձրաբերձ ժայռապատերը, որոնք նաև արժվաքներ են: Գետի ծախակողմյան ժայռապատից չնայած բարակ, բայց գեղեցիկ ջրվեժ է իջնում, իսկ քիչ ներքև միջնադարյան բեր-

դապարսպի երկու բուրգ առավել գեղեցիկ ու տպավորիչ են դարձնում տեսադաշտը: Այստեղ նաև քարե կամարակապ կամուրջ կա, որտեղով ժամանակին Վարանդայի զինվորներն ու բնակիչները դեպի բերդ են բարձրացել: Մի պահ պատկերացնում եմ, թե ինչպես էին 1992 թվականի մայիսի 8-ին հայոց քաջերը բարձրանում ժայռն ի վեր և մեր պատմական հայրենիքից դուրս քշում թշնամուն: Հայրս սասու է, որ նաև այլ ուղղությամբ էին գրոհում հայոց քաջերը: Օրը մոտենում է ավարտին. դուրս ենք գալիս Շուշիի կիրճից՝ տպավորված գեղատեսիլ բնությամբ ու մեր պայքերի կառուցած կամուրջով, քարե տանիքներով շինություններով: Բայց մեր էքսկուրսիան շարունակվում է: Հաջորդ կանգառը Շուշի քաղաքի Ջրղորդու գոյվող տարածքն էր: Հազարավոր սպիտակ ծաղիկները, հիմնականում երիցուկներ, չքնաղ տեսարան էին ստեղծել, իսկ վերինց արդեն այլ կերպ էր դիտվում կիրճը: Սպիտակ ծաղիկներից ծաղկեպսակներ ենք հյուսում, լուսանկարվում: Մայրամուտին Շուշիի Դազանչեցոց եկեղեցու գմբեթը